ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1700: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

ՇԱԲԱԹ, 3 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2015Թ.
№ 26 (369)
www.syuniacyerkir.am

12 տարի առաջ՝ 2003թ. հոկտեմբերի 1-ին, լույս տեսավ «Սյունյաց երկրի» առաջին համարը:

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ Ա. ՄԻՐԶՈՅԱՆԻ

145 տարի առաջ Գորիսին շնորհվեց քաղաքի կարգավիճակ

Գորիս բնակավայրի արմատները տանում են հազարամյակների խորքերը, բայց այն քաղաքի կարգավիճակ է ստացել 1870 թվականին որպես Ելիզավետպոլի նահանգի մեջ մտնող Զանգեզուրի գավառային կենտրոն: Սեպտեմբերի 20-ին Գորիսում մեծ ու փոքրով, մայրաքաղաքից եւ արտերկրից ժամանած հյուրերով նշեցին Գորիսին քաղաքի կարգավիճակ շնորհելու 145-ամյակը: Գորիս քաղաքի տոնին մասնակցում էին Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, առաջին բանակային կորպուսի հրամանատար, գնդապետ Տիգրան Փարվանյանը, աշխատանքի վետերաններ: Տոնակատարության մասնակիցներն այցելեցին Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, հյուրերն աղոթք հղեցին առ Աստված: Եկեղեցու վրա շինորոգման աշխատանք են կատարում, մարզպետն առիթը բաց չթողեց հետաքրքրվելու դրա ընթացքով, նաեւ որոշ հրահանգներ

էջ 4

Ատոմակայանի ռադիոակտիվ թափոնների չեզոքացումը Տաշտունո՞ւմ

«Սյունյաց երկրի» հարցերին պատասխանում է Տաշտունի ոսկու արդյունահանման փորձարարական գործարանի նորանշանակ տնօրեն Գեորգի Գրուզինովը

Հանքարդյունաբերություն

Մեղրասարի ոսկու հանքավայրի բազայի վրա Տաշտունում վերջին տարիներին կառուցված փորձարարական ձեռնարկության նոր տնօրեն է նշանակվել Գեորգի Գրուզինովը: «ԱՏ մետալս» ընկերության հիմնադրած այդ ձեռնարկությունն ավելի վաղ ղեկավարում էր Ալեքսեյ Սերեդան, ով հայտնի է մեր ընթերցողին՝ «Սյունյաց երկրին» մոտ մեկ տարի առաջ տված հարցազրույցից (8 նոյեմբերի 2014թ.):

Գեորգի Գրուզինովը ծնվել է 1956-ին, ունի բարձրագույն տնտեսագիտական կրթություն, աշխատել է Ուրալի հանքարդյունաբերական ձեռնարկություններում, ապա Մոսկվայում՝ հանքարդյունաբերության կառավարման ոլորտում: Այն վրացիների շառավիղներից է, որոնց նախնիները դարեր առաջ տեղափոխվել են Ռուսաստան եւ բնակվել Դոնի կազակների հետ: Աշխատառճի բնորոշ գծերն են, ինչպես ինքն է խոստովանում, սառը հաշվարկը, իրատեսությունը եւ առանց հույզերի գործելակերպը:

Հակառակ մերօրյա մի քանի տնօրենի՝ չի սիրում լուսանկարվել եւ ամոթխածությամբ է կանգնում լուսանկարչի առջեւ՝ մտածելով, որ տնօրենի պատկերն ավելի ցայտուն պիտի

էջ 2

Մեղրիում ասֆիճանաբար լուծվում են առկա խնդիրները

Մեղրի կատարած հերթական այցելության ժամանակ արձանագրեցինք փաստը, որ համայնքի ներքին ջրատար ցանցի հիմնանորոգման աշխատանքներն իրենց բացասական հետեւանքը չեն թողել քաղաքի վրա, ինչպես մարզկենտրոնում: Խոսքը, իհարկե, չի վերաբերում ջրի որակին, օգտագործված խողովակաշարին եւ այլն, որոնց որակը, բնականաբար, ժամանակը ցույց կտա: Խոսքն այստեղ ճանապարհների մասին է:

Մեղրիում Ասիական բանկի ֆինանսավորմամբ (պատվիրատու՝ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ) իրականացվող ներքին ջրատար ցանցի հիմնանորոգման աշխատանքներն ավարտին են մոտենում: Դրանք իրականացնում է «Մեղրու ՃՇՇՀ» ՍՊԸ-ն (տնօրեն՝ Ազատ Գասպարյան), որի կատարածի որակին բազմիցս ենք անդրադարձել: Ըստ նախնական պայմանավորվածության՝ շինարարական աշխատանքները կատարելուց հետո պետք է ասֆալտապատվեին միայն փողոցների քանդված հատվածները:

Բայց ընկերությունն ասֆալտապատել է ոչ միայն քանդված շերտերը, այլեւ փողոցի որոշ հատվածները, որտեղ կատարվել են աշխատանքները: *«Աշխատանքներն ամբողջովին ավարտելուց հետո մեղրեցիներին պիտի տեղեկացնենք այդ մասին»,* – նշեց քաղաքապետ Արշավիր Հովհաննիսյանը եւ հավելեց, որ բարձր մակարդակի գործ է կատարվել: *«Յուրաքանչյուր հիմնարկ-ձեռնարկության հետ բարիդրացիական հարաբերություններից նախեւառաջ շահում են Մեղրին եւ մեղրեցին»,* – նշեց քաղաքապետը:

Վերանորոգման աշխատանքներ են կատարվում նաեւ օրվա կարգավորիչ ջրամբարներում եւ մաքրման կայաններում, որտեղից տարիներ շարունակ ջրի աղտոտված զանգված էր հասնում բնակիչներին: *«Հնարավոր չէ միայն մեկ ջրամբարում կամ մաքրման կայանում աշխատանք կատարել, մյուսներում՝ ոչ: Դա կլինի անիմաստ աշխատանք, քանի որ մյուսներից եկող կեղտոտ ջուրը կխառնվի: Ընդհանուր ջրատար համակարգին խողովակները դեռեւս կցված չեն, որ նախատեսվում է կատարել հոկտեմբերի վերջին կամ նոյեմբերի սկզբներին»,* - տեղեկացրեց Ա.Հովհաննիսյանը:

Հիշեցնենք, որ վարձակալության իրավունքով եւ 15 տարի ժամկետով ցանցը տրամադրվել է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին:

«Մեղրու կանանց ռեսուրս կենտրոն» հկ-ի նախաձեռնությամբ դպրոցմանկապարտեզ-արվեստի դպրոց տանող ճանապարհի անցումը վերածվել է հեքիաթային աշխարհի: *«Քաղաքապետ ընտրվելուց հետո ինձ մտահոգող հարցերից մեկն էլ այդ անցման աղբը վերացնելն էր: Անընդհատ կատարում էինք մաքրման աշխատանքներ, բայց երկար չէր տեւում: Հկ-ի նախաձեռնությամբ կատարված աշխատանքը վերջնականապես լուծեց հարցը: Այլեւս անհնար է այդ հատվածում աղբ նետել»,* – ոգեւորությամբ պատմում է քաղաքապետը:

Հեքիաթային հերոսներով նկարազարդ-

էջ 2

Մեղրիում ասպիճանաբար լուծվում են առկա խնդիրները

էջ 1 ված անցումը հատկապես փոքրիկների համար սիրելի անկյուն է դարձել:

Հայաստանում ԱՄՆ դեսպանատունը կազմակերպում է անգլերենի անվճար դասընթացներ Մեղրիում, որ կտեւի 2015թ. սեպտեմբերից մինչեւ 2016թ. մայիս: Դասընթացներն անց են կացվում երկու տարիքային խմբով՝ 14-17 տարեկան դպրոցականների, ինչպես նաեւ 18-45 տարեկան քաղաքացիների համար:

Հունիսին Մեղրիում բռնկված խոշոր հրդեհի հետեւանքով տուժածները (հիմնականում՝ 7 ընտանիք) դեռեւս ժամանակավոր ապաստան են գտել հյուրանոցում, որի ծախսերը հոգում է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը: *«Հոկտեմբերից հավանաբար կսկսվեն հրդեհված շենքի վերանորոգման աշխատանքները՝ Զանգեզուրի ՊՄԿ-ի հովանավորությամբ: Նշեմ, որ թե՛ Սյունիքի մարզպետը, թե՛ պատկան մարմինները, թե՛ կոմբինատը եւ թե՛ առանձին անհատներ անմիջապես արձագանքեցին՝ ցուցաբերելով անհրաժեշտ օգնություն»,* – նշեց քաղաքապետը:

ՀՀ բնապահպանության նախարարության կայքում տեղադրված ծանուցման համաձայն՝ 2015թ. օգոստոսի 14-ին Լիճքի գյուղապետարանում տեղի ունեցավ «Թաքթուն» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Լիճքի պղնձի հանքավայրի նախագծի նախնական գնահատման հայտի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության հանրային քննարկում, որին մասնակցում էր նաեւ Մեղրու քաղաքապետը: *«Ես գյուղացիներին ասացի, որ դժգոհելու պատճառ չունեն: Եթե բողոքող էին, պիտի ի սկզբանե անեին դա, ոչ թե գումար վերցնեին, թույլ տային իրենց այգում պեղումներ անել, հետո դժգոհեին: Այդ հարցը թող համայնքը որոշի, բայց որոշելիս էլ յուրաքանչյուրի պահվածքը պատշաճ լինի: Փող չվերցնեին, ես էլ իրենց կողքին կանգնած կլինեի»,* – նշեց քաղաքապետը:

Քաղաքապետից տեղեկացանք նաեւ Մեղրու նախկին հիվանդանոցի շենքի ճակատագրի վերաբերյալ: Նա նշեց, որ կարգավիճակում փոփոխություն չկա դեռեւս, սպասում են վարչապետի որոշմանը, բայց նախապես համաձայնություն կա, որ այն պիտի լինի համայնքային սեփականություն: Ինչպես նախորդ հրապարակումներից մեկում էինք նշել, նախատեսվում է այն դարձնել բնակելի շենք:

Ինչպես հայտնի է, արդեն իրականացվում է Մեղրու ինքնահոս ոռոգման համակարգի ծրագիրը, որ նախատեսում է Արաքս գետից ջուր մղող 16 պոմպակայանը փոխարինել Մեղրի գետից ինքնահոս ոռոգմամբ: Մեղրու քաղաքապետը մշտապես դեմ է եղել այս ծրագրին, հիմա էլ դեմ է. *«Մանավանդ ամռան սեզոնին, երբ Մեղրի գետից, որ հատկապես երաշտային տարիներին նույնիսկ առու է, ինչպե՞ս պիտի ջուր տանեն: Այլ հարց է, եթե Լիճք-Զվարի հատվածում ջրամբար կառուցեն, որի գաղափարը դեռեւս խորհրդային տարիներին էր շրջանառվում: Ջրամբար չկառուցելու դեպքում նրանց կատարած աշխատանքը, իմ կարծիքով, անարդյունավետ է լինելու»:*

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ատոմակայանի ռադիոակտիվ թափոնների չեզոքացումը Տաշտունո՞ւմ

էջ 1 երեւա իր գործերի մեջ, իր ղեկավարած ձեռնարկությունում:

Ի դեպ, մինչեւ տնօրենի հետ հանդիպելը, շրջեցինք ձեռնարկության տարածքում. աշխատանքային մթնոլորտ էր տիրում այնտեղ:

– Գեորգի Բորիսովիչ, նախ ողջունում ենք Ձեր նշանակումը Սյունիքում եւ ցանկանում հաջողություններ՝ մարզի տնտեսության զարգացմանը նպաստելու գործում: Որքանով տեղյակ ենք, մենակ չեք եկել Տաշտուն, այլ նոր թիմով:

– Շնորհակալ եմ, որ հետաքրքրվում եք մեր ձեռնարկության գործունեությամբ:

Չէ, թիմով չենք եկել, միայն տնօրենն ու գլխավոր ինժեներն են փոխվել:

– Մեկ տարի առաջ ենք եղել այստեղ եւ նախկին տնօրենի օգնությամբ ծանոթացել հիմնադրվող ձեռնարկության հետ կապված մանրամասներին:

Ի՞նչ փոփոխություններ են կատարվել անցած մեկ տարում:

– Արտաքուստ ոչինչ չի փոխվել, իսկ ներքուստ շատ բան է փոխվել, սկզբունքային փոփոխություններ են կատարվել: Եվ առաջին հերթին՝ բիզնեսի կառավարման առումով, հնարավորությունների ճշգրտման առումով: Օրինակ, եթե նախկինում թվում էր, թե ձեռնարկությունում աշխատանքները կկազմակերպվեն դրսից հրավիրված մասնագետների միջոցով, ապա այսօր այլ կարծիք ունենք. Մեղրիում կան համապատասխան որակյալ կադրեր, եւ առաջին հերթին կհենվենք տեղական կադրերի վրա: Ու միայն առանձին բարձրորակ մասնագետներ կհրավիրենք դրսից:

– Փոխվել է ձեռնարկության ղեկավարը. դա նշանակում է՝ ինչոր չափով վերանայվել են խնդիրները, անելիքները:

Որո՞նք են ձեռնարկության առջեւ ծառացած խնդիրները ներկա փուլում:

– Նախ՝ դուրս գալ փորձարարական վիճակից, որի մեջ գտնվում ենք, եւ կազմակերպել ժամանակակից արդյունաբերության:

Այնուհետեւ՝ ապահովել բիզնեսի շահութաբերությունը: Նպատակ ունենք 2016-ի վերջին հասնել այսպիսի ցուցանիշի՝ մեկ օրում 500տ հանքաքարի մշակում, ինչի համար ունենք համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

– Հանքարդյունաբերության մեջ եւ մանավանդ ոսկու արդյունահանման ոլորտում միշտ էլ հետաքրքրել է մշակման տեխնոլոգիան. ըստ էության հենց դրանից է մեծապես կախված շրջակա միջավայրի վրա ձեռնարկության ազդեցության աստիճանը:

Կարելի՞ է ասել, որ ձեռնարկությունում հանքաքարի մշակման տեխնոլոգիան վերջնականապես ճշտված ու ներդրված է:

– Չէի ասի, որ հանքաքարի մշակման տեխնոլոգիան մինչեւ վերջ մշակված է այստեղ: Դրա համար է, որ զուգահեռաբար ստեղծվում է կոնստրուկտորական բյուրո՝ միջազգային չափանիշներին համապատասխան եւ անվտանգ ու արդյունավետ տեխնոլոգիա մշակելու համար:

– Մեզ հետաքրքրող հարցերից մեկն էլ, բնականաբար, այդ ձեռնարկության սոցիալական արդյունքն է, ավելի ճիշտ՝ ակնկալվող աշխատատեղերի քանակը:

– Հիմա 20 մարդ է աշխատում ձեռնարկությունում, մոտ ապագայում աշխատատեղերի թիվը կհասնի 120-ի՝ բարձր աշխատավարձով:

– Տաշտունն ու մերձակա համայնքները, կարծում ենք, որոշակի նախապատվություն ունեն՝ օգտվելու այդ աշխատատեղերից: Ճի՞շտ է մեր ենթադրությունը:

– Կա հաստիքացուցակ, եւ եթե լինում է թափուր աշխատատեղ, ապա այդ մասին առաջին հերթին տեղեկանում է Տաշտունի բնակչությունը:

– Այդ համայնքի հետ կապված ուրիշ ի՞նչ ծրագրեր ունեք մոտակա ամիսների համար:

– Գյուղի փողոցների գիշերային լուսավորության ապահովում, խմելու ջրատարի կառուցում կամ հիմնանորոգում, աշխատատեղերի ստեղծում…

– Ձեռնարկության սկզբնավորումից ի վեր ու մինչեւ հիմա լսում ենք մտահոգություններ՝ տարածաշրջանի բնապահպանական իրավիճակին ձեռնարկության հնարավոր բացասական անդրադարձների մասին:

– Այդ մասին խոսում են եւ բնապահպանական ռիսկերի վերաբերյալ չափազանցված հայտարարություններ են անում արեւմտյան գրանտներով ապրող հկ-ները: Նրանց նպատակն ավելի քան հստակ է՝ Հայաստանը զրկել տնտեսական զարգացման հնարավորություններից, Հայաստանը դարձնել գաղութ:

Թող այդ նույն մարդիկ ասեն, թե, օրինակ, ԱՄՆ-ում, Չինաստանում ի՞նչ տեխնոլոգիաներով են արդյունահանում ոսկին:

Մեր գործունեության սկզբունքն է՝ աշխատել Հայաստանի Հանրապետության օրենքներին խիստ համապատասխան:

Միայն Հայաստանի Հանրապետության օրենքները խախտելու դեպքում քննարկման առարկա կարող է դառնալ մեր գործունեությունը:

Կա մեկ այլ իրողություն եւս՝ հնարավոր չէ հանքարդյունաբերության մեջ լիովին բացառել վնասակար ազդեցությունը: Հակառակ պարագայում պետք է ընդհանրապես հրաժարվել հանքարդյունաբերությունից: Պարզապես ամեն ինչ պետք է լինի թույլատրելիի սահմաններում:

Մեր ուսումնասիրությունները, մինչդեռ, վկայում են, որ ձեռնարկությունում կիրառվող տեխնոլոգիաները շրջակա միջավայրի վտանգավոր աղտոտում չեն ենթադրում:

– Բնապահպանական հարցերի մասին խոսելիս ամենամեծ մտահոգությունը Մեղրու տարածաշրջանում կապված էր եւ կապված է Ձեր կողմից շահագործվող հանքավայրում ուրանի առկայության հետ:

– Նման բան չկա, դա սխալ ու ոչ արժանահավատ տեղեկատվություն է:

Մեկ ուրիշ նորություն ունենք՝ կա ՄԱԳԱՏԵ-ի համաձայնությունը, կա Հայաստանի կառավարության օժանդակությունը՝ մեզ վրա կվերցնենք Հայաստանի ատոմակայանի ռադիոակտիվ թափոնների չեզոքացման խնդրի լուծումը:

– Դա, մեղմ ասած, ամենասենսացիոն նորությունն է, որ իմանում ենք, թեեւ այդ մասին վաղուց էին խոսակցություններ շրջանառվում:

Հաշվի առնելով խնդրի կարեւորությունը՝ անհրաժեշտ կլինի առանձին հարցազրույց վարել Ձեզ հետ տվյալ հիմնախնդրի շուրջ:

– Խնդրեմ:

Հարցազրույցը՝
ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ

Լուրեր

ՀՀ նախագահի հրամանագրով Անկախության 24-ամյակի առթիվ մատաղ սերնդի կրթության եւ դաստիարակության գործում ունեցած վաստակի համար հանրապետության մի խումբ ուսուցիչների, այդ թվում՝ Կապանի թիվ 1 միջնակարգ դպրոցի աշխարհագրության ուսուցչուհի Անահիտ Մինասյանին շնորհվել է ՀՀ վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչում: Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը շնորհավորել է Ա.Մինասյանին՝ մաղթելով ամուր առողջություն, անսպառ եռանդ ու նորանոր հաջողություններ:

Ըստ hraparak.am-ի՝ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում սեպտեմբերի 11-ին հրապարակվել է լրագրող Արմենակ Դավթյանի դատավճիռը: Դատարանը 5 տարի 6 ամսվա ազատազրկում է սահմանել: Նրա պաշտպանը հայտնեց, որ իրենք պատրաստվում են վճիռը բողոքարկել: *«Մենք պահանջելու ենք կարճել գործի վարույթը՝ հանցակազմի բացակայության հիմքով: Քանի որ կատարվածը քաղաքացիաիրավական հարթությունում է եւ արդեն իսկ կա, անցած տարի կայացվել է քաղաքացիական գործով վճիռ, համաձայն որի՝ այդ գումարը փոխառությամբ տրված գումար է, մինչդեռ քրեական գործով դատարանը որոշեց, որ գումարը խաբեությամբ ձեռք բերված գումար է: Այսինքն՝ նույն փաստի վերաբերյալ երկու դատարանները տարբեր գնահատականներ են ներկայացրել»,* – նշեց պաշտպանը:

Սեպտեմբերի 17-20-ն ընկած ժամանակահատվածում ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի նախաձեռնությամբ «Էլեկտրոնների, պոզիտրոնների, նեյտրոնների եւ ռենտգենյան ճառագայթների ցրումը արտաքին ազդակների առկայությամբ» միջազգային գիտաժողովի երիտասարդ գիտնականների համար դասախոսություններն անցկացվեցին Մեղրիում, որի բացմանը ներկա էր նաեւ քաղաքապետ Արշավիր Հովհաննիսյանը: Ինչպես տեղեկացրեց ինստիտուտի գիտական գծով փոխտնօրեն Արմեն Աթանեսյանը, արդեն ավանդական է դարձել Գուրգեն Ասկարյանի անվան միջազգային դպրոցի երիտասարդ գիտնականների համար դասախոսությունները Մեղրիում անցկացնելը: *«Նպատակը, նախեւառաջ, ճանաչողական է: Մեղրին եւ մեղրեցիները միշտ էլ գրկաբաց են ընդունել մեզ: Մեր ինստիտուտի հիմնադիրներից ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալպիկ Մկրտչյանն էլ, ով Մեղրու պատվավոր քաղաքացի է, վարակեց մեզ այս տարածաշրջանի հանդեպ ունեցած իր սիրով»,* – նշեց Ա.Աթանեսյանը: Նշենք, որ դասախոսությունները կարդում են ոչ միայն հայ, այլեւ արտասահմանյան 7 տարբեր պետությունից ժամանած գիտնականներ, պրոֆեսորներ, ակադեմիկոսներ:

Սեպտեմբերի 16-ին՝ Հունան Ավետիսյանի զոհվելու օրը, ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդական, գեներալ-լեյտենանտ Մուրազ Սարգսյանի առաջարկությամբ եւ նախաձեռնությամբ Կապանում նշվում է Սխրանքի օրը: Հունան Ավետիսյանի արձանին ծաղկադրում կատարելուց հետո միջոցառման մասնակիցների համար ռազմահայրենասիրական բաց դաս անցկացվեց Կապանի Հունան Ավետիսյանի անվան թիվ 9 ավագ դպրոցի աշակերտների մասնակցությամբ: Հնչեցին հայրենասիրական բանաստեղծություններ եւ երգեր, ներկայացվեց ԽՍՀՄ հերոսի կյանքի անցած ուղին:

ԿԱՐԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ. ««Կյանքի ստենտ» ծրագրի շրջանակներում պետությունը տրամադրում է ընդամենը մեկ ոչ դեղապատ ստենտի գումարը»

Առողջապահություն

«Կյանքի ստենտ» ծրագրի շրջանակներում իրականացվող սրտի անհետաձգելի վիրահատության, սրտանոթային հիվանդությունների առաջացման պատճառների, Գորիսի հայ-ֆրանսիական սրտաբանական հիվանդանոցի առջեւ ծառացած խնդիրների եւ հետագա անելիքների մասին է զրույցը հիվանդանոցի բուժական մասի ղեկավար, միջամտական բժիշկ-սրտաբան Կարեն Համբարձումյանի հետ:

– Բժի՛շկ Համբարձումյան, տեւական ժամանակ է՝ աշխատում եք հայ-ֆրանսիական սրտաբանական հիվանդանոցում: Եթե թվերով խոսենք, մարզում ինչպիսի՞ վիճակագրական պատկեր ունենք:

– 2013թ. հոկտեմբերի վերջից մինչեւ 2015թ. հուլիսն ընկած ժամանակահատվածում, այսինքն՝ 20 ամսվա կտրվածքով, կենտրոնը մոտ 800 հոգու առաջարկել է սրտի անոթների կորոնարոգրաֆիա (սրտի անոթների հետազոտում), որից միայն 566 հոգին է համաձայնել, իսկ հիվանդների մոտ 30 տոկոսը հրաժարվել է՝ հավանաբար պայմանավորված անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայությամբ: Նշված 566 հիվանդից 330-ին կատարվել է սրտի անոթների ստենտավորում, որովհետեւ կորոնարոգրաֆիայից հետո մոտ 30 տոկոսն էլ հրաժարվել է ստենտավորումից, այսինքն՝ կորոնարոգրաֆիայի համար հնարավորություն են ունեցել գումար վճարել, բայց ստենտավորման համար՝ ոչ: Եթե համեմատություն անեմ, պիտի արձանագրեմ այս տարածաշրջանին բնորոշ հետեւյալ փաստը. Երեւանում իմ աշխատելու տարիներին, եթե հիվանդների մոտավորապես 40 տոկոսին էր դրվում երկու եւ ավելի ստենտ, ապա Սյունիքի մարզում՝ 71 տոկոսին: Սա նշանակում է, որ այս մարզում մարդիկ դուրս են բժշկական վերահսկողությունից, ժամանակին չեն դիմում բժիշկներին, դիմում են միայն ծայրահեղ ծանր վիճակում. հիվանդների մոտավորապես 80 տոկոսը դիմում է սուր սրտաբանական նոպայով, որի հարաբերակցությունը Երեւանում մոտավոր 60/40 է, այսինքն՝ հիվանդների 60 տոկոսն է ընդունվում սուր վիճակում, իսկ 40 տոկոսի շրջանում հերթական ստուգման ընթացքում հայտնաբերվում է հիվանդությունը եւ ցուցաբերվում անհրաժեշտ բուժօգնություն: Այստեղ ընդամենը 20 տոկոսն է պլանային ստուգում անցնում, 80 տոկոսը, մինչեւ դանակը ոսկորին չի հասնում, չի դիմում բժշկի:

– Փաստորեն, տարածաշրջանում կենտրոնի առկայությունն անգամ չի՞ ստիպում մարդկանց ժամանակին դիմել բժշկի, մանավանդ այս հիվանդության երիտասարդացման պայմաններում:

– Ես նկատում եմ, որ աստիճանաբար պլանային ստուգում անցնողների թիվն ավելանում է, անցնում են համապատասխան հետազոտություն, ախտորոշվում է հիվանդությունը, բայց երբ առաջարկում ես կորոնարոգրաֆիա կամ ստենտավորում, արդեն հրաժարվում են՝ ֆինանսական խնդիրներից ելնելով: Այս ամենը հաշվի առնելով՝ դիմել ենք Ֆրանսիայի մեր հիմնադիրներին գների իջեցման հարցով: Անցյալ տարի մեկ անգամ հօգուտ հիվանդի գները վերանայվեցին, այս տարվա հոկտեմբերին թե՛ կորոնարոգրաֆիայի, թե՛ ստենտավորման գների իջեցում է սպասվում:

– Գիտենք, որ բավականին թանկ հաճույք է սրտի ստենտավորումը: Միջին թվաբանականով եթե հաշվենք, որքա՞ն գումար է հարկավոր հիվանդի ստենտավորման համար: 2015թ. հունվարից հանրապետությունում մեկնարկած «Կյանքի ստենտ» ծրագրից սոցիալական ո՞ր խմբի մարդիկ են օգտվում:

– Հունվարից մեկնարկած սրտի անհետաձգելի վիրահատության ծրագրով ՀՀ առողջապահության նախարարությունը սահմանել է այն բոլոր չափորոշիչները, որոնց դեպքում հիվանդը ներառվում է պետպատվերի մեջ՝ ստանալով ընդամենը մեկ ոչ դեղապատ ստենտ: Բայց այդ չափորոշիչներն այնքան սահմանափակ են, որ հիվանդների մոտ 50 տոկոսի տվյալները չեն համապատասխանում դրանց: Այս տարի արդեն այդ ծրագրի շրջանակներում կենտրոնում մոտ 40 հոգու ստենտավորել ենք: Մինչ այս ծրագիրը սրտի անվճար եւ արտոնյալ պայմաններով վիրահատություններ իրականացվում էին բնակչության սոցիալապես անապահով եւ հատուկ խմբերում ընդգրկված 36,0 եւ ավելի անապահովության միավոր ունեցող անձանց, սոցիալական փաթեթի շահառուներ՝ զինծառայողներին, ինչպես նաեւ փրկարար ծառայողներին եւ նրանց ընտանիքի անդամներին, պետական հիմնարկների եւ կազմակերպությունների աշխատողների համար: Նոր ծրագրով շահառու են այն քաղաքացիները, ովքեր ներառված չեն սրտի անվճար ինվազիվ միջամտության իրավունք ունեցող վերոնշյալ որեւէ սոցիալական խմբում: Սյունիքի մարզին այդ

էջ 5

Կապանը հրաժեշտ տվեց իր նշանավոր զավակին

Սեպտեմբերի 25-ին հայրենի Ագարակ գյուղում հողին հանձնվեց անվանի պետական գործիչ Արմեն Մովսիսյանը, ով մահացել է 2015թ. սեպտեմբերի 21-ին՝ երկարատեւ հիվանդությունից հետո:

Նույն օրը, ժամը 12-ից 14-ը Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում տեղի ունեցավ Արմեն Մովսիսյանի հոգեհանգիստը:

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը ցավակցություն էր հայտնել Մովսիսյանների ընտանքին, հարազատներին ու մերձավորներին՝ Արմեն Մովսիսյանի վաղաժամ մահվան կապակցությամբ:

Արմեն Մովսիսյանը ծնվել է 1962թ. հունվարի 13-ին, Կապան քաղաքում:

1983թ. ավարտել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտը, 1989 թվականին՝ Համամիութենական թեթեւ արդյունաբերության ինստիտուտը:

1983-1991թթ. աշխատել է Կապանի տրիկոտաժի ֆաբրիկայում՝ վարպետ, բրիգադիր, արտադրամասի պետ, ապա նաեւ գլխավոր տնօրենի տեղակալ:

1991-1992թթ. զբաղեցրել է Կապանի քաղխորհրդի գործկոմի նախագահի առաջին տեղակալի պաշտոնը:

1993-1997թթ. եղել է Կապանի «Էլեկտրոն» գործարանի տնօրենը, 1997-1998 թվականներին՝ ՀՀ էներգետիկայի նախարարության «Սյունիքի մարզային էլեկտրացանց» ՊՓԲԸ-ի տնօրենը, 1998-2000թթ.՝ «Հարավային էլեկտրացանց» ՊՓԲԸ-ի գործադիր տնօրենը:

2000-2001թթ. զբաղեցրել է ՀՀ էներգետիկայի նախարարի տեղակալի պաշտոնը, 2001թ. հուլիս-դեկտեմբերին՝ ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի տեղակալի պաշտոնը:

2001-2008թթ. զբաղեցրել է ՀՀ էներգետիկայի նախարարի պաշտոնը, 2008-2014թթ.՝ ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարի պաշտոնը:

2014թ. մայիսի 7-ից ՀՀ նախագահի խորհրդականն էր:

Արմեն Մովսիսյանը տեխնիկական գիտությունների թեկնածու էր, մի քանի մենագրությունների եւ մի շարք գիտական հոդվածների հեղինակ:

Պարգեւատրվել է Անանիա Շիրակացու եւ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալներով:

Արմեն Մովսիսյանի՝ անսպառ եռանդով լի հայրենասեր գործչի եւ մարդու հիշատակը միշտ կլուսավորի եւ կջերմացնի բոլոր նրանց հոգիները, ովքեր ճանաչել են նրան:

«Սյունյաց երկիր» թերթի խմբագրակազմը եւս ցավակցում է Մովսիսյանների ընտանիքին, հարազատներին ու մերձավորներին՝ Արմեն Մովսիսյանի վաղաժամ մահվան կապակցությամբ:

«Սյունյաց երկիր»

Լուրեր

Սեպտեմբերի 25-ին Կապանի մշակույթի կենտրոնի փոքր դահլիճում տեղի ունեցավ Սմբատ Մելիք-Ստեփանյանի «Կապան. ուրվագծեր երկրամասի պատմության» գրքի շնորհանդեսը: Այն իրատարակվեց «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության եւ Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանի հովանավորությամբ: Նախ ներկայացվեց վաղամեռիկ պատմաբանի ու մանկավարժի կյանքի ուղին, այնուհետեւ գրքի խմբագիր Արմեն Գեւորգյանը պատմեց գրքի լույս ընծայման պատմությունը: Գրքի արժանիքների մասին խոսեցին Գրիշա Սմբատյանը, Ռոբերտ Էջանանցին, ելույթներ ունեցան նաեւ Կապանի զինկոմի տեղակալ, մայոր Գարիկ Ներսիսյանը, Քաջարանի քաղաքապետ Վարդան Գեւորգյանը, Կապանի թիվ 2 միջնակարգ դպրոցի տնօրեն Ռիտա Օվչյանը, Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը: Ս.Մելիք-Ստեփանյանի կինը՝ Նունե Ստեփանյանը, երախտագիտություն հայտնեց բոլոր նրանց, ովքեր նեցուկ եղան գրքի լույս ընծայման գործում: Շնորհանդեսի ավարտին հեղինակի դուստրը՝ Լիանա Ստեփանյանը, երկու դաշնամուրային կատարում նվիրեց հոր հիշատակին:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով հանրապետության թատրոններն իրենց խաղացանկերում ներառել են Մեծ եղեռնի թեմատիկայով ստեղծագործություններ: Բացառություն չէ նաեւ Գորիսի Վաղարշ Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնը, որը սեպտեմբերի 29-ին հյուրախաղով Կապանում էր եւ հանդիսատեսի դատին հանձնեց Ռիչարդ Կալինովսկու «Հրեշը լուսնի վրա» ներկայացումը (բեմադրությունը՝ թատրոնի գլխավոր ռեժիսոր Գոռ Մարգարյանի), դերերում՝ Էրիկ Գրիգորյան, Արինե Ծատրյան, Սեյրան Մկրտչյան, Գոռ Հարությունյան: Ներկայացումը հաջորդ օրը բեմադրվեց Քաջարանում:

Սեպտեմբերի 25-ին Կապանի քաղաքապետարանին հարակից պուրակում ՀՀ ԱՍՀՆ զբաղվածության պետական գործակալության նախաձեռնությամբ, պետական բյուջեի ֆինանսավորմամբ կազմակերպվեց աշխատանքի տոնավաճառ, որին մասնակցեց 25 գործատու՝ շուրջ 60 թափուր աշխատատեղով՝ նախորդ տարվա 80-ի փոխարեն: Տոնավաճառը եւս մեկ անգամ հնարավորություն տվեց աշխատանք փնտրողներին՝ հանդիպելու գործատուներին, ծանոթանալու աշխատաշուկային, առաջարկվող զբաղվածության պետական աջակցության ծրագրերին եւ գտնելու հարմար աշխատանք, իսկ գործատուներին՝ համալրելու իրենց ընկերությունները համապատասխան կադրերով:

Սեպտեմբերի 29-ից Կապանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ մաքրվում եւ բարեկարգվում է Վաչագան գետի հունը: Աշխատանքները կատարվում են «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ աջակցությամբ եւ ընկերության տեխնիկայի կիրառմամբ: Ընդհանուր կմաքրվի գետի՝ քաղաքի կենտրոնական մասով անցնող հիմնական՝ մոտ 920մ երկարությամբ հատվածը՝ «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ հարակից կամրջից մինչեւ Ողջի գետը թափվելու հատվածը: Գետը մաքրվում է աղբից, գետի մեջ աճած բուսականությունից: Նշենք, որ Վաչագան գետը վերջին անգամ մաքրվել է 2008 թվականին:

145 տարի առաջ Գորիսին շնորհվեց քաղաքի կարգավիճակ

էջ 1

տալու:

Քաղաքապետարանում հյուրասիրություն էր կազմակերպվել, որին մասնակցում էին համայնքի կյանքում նշանակալի ավանդ ներդրած մարդիկ: Հնչեցին բարեմաղթանքներ եւ շնորհավորանքի խոսքեր: Տոնակատարության մասնակիցներն այնուհետեւ ծաղիկներ դրեցին Գրիգոր Տաթեւացու, ապա՝ ականավոր գորիսեցիներ Գուսան Աշոտի, Ակսել Բակունցի, Սերո Խանզադյանի կիսանդրիներին: Տոնակատարության հանդիսավոր բացումը Գրիգոր Տաթեւացու անվան հրապարակում էր, որտեղ ներկաներին շնորհավորանքի խոսքեր հղեց Գորիսի քաղաքապետ Վաչագան Ադունցը: **«Այսօր տոնում ենք մեծ ավանդույթներ կրող մեր քաղաքի 145-ամյակը, քաղաք, որ իրավամբ կարող է հպարտանալ իր երեւելի զավակներով, իր հաղթանակներով, իր բովանդակալից անցյալով: Եվ պատահական չէ, որ այսօրվա տոնակատարությունը սկսում ենք մեր մեծերի հուշարձաններին ծաղիկներ խոնարհելով: Միշտ հպարտացել ենք Գրիգոր Տաթեւացիով, Գուսան Աշոտով, Սերո Խանզադյանով, մեծն Ակսել Բակունցով, Գորիսի բոլոր-բոլոր արժանավոր զավակներով, որ ասես մեր քաղաքի այցեքարտն են դարձել եւ մեզ ճշմարիտ ապրելու ուղին են ցույց տալիս ու միշտ, այսօր եւ ընդմիշտ արժանի լինել նրանց կյանքին ու գործին»,** – իր խոսքում մասնավորապես ասաց քաղաքապետ Վաչագան Ադունցը:

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ Ա. ՄԻՐԶՈՅԱՆԻ

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ Ա. ՄԻՐԶՈՅԱՆԻ

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ Ա. ՄԻՐԶՈՅԱՆԻ

Պատվոգրեր հանձնվեցին Գորիս քաղաքի կրթության, առողջապահության, սպորտի, տնտեսության եւ մերօրյա ազատամարտում՝ Արցախյան պատերազմում աչքի ընկած մարդկանց: Հրապարակվեց Գորիսի ավագանու որոշումը, ըստ որի առաջին բանակային կորպուսի հրամանատար, գնդապետ Տիգրան Փարվանյանին շնորհվեց Գորիս քաղաքի պատվավոր քաղաքացու կոչում: Պարգեւատրվածները շնորհակալություն հայտնեցին իրենց վաստակը գնահատելու համար եւ երախտագիտության խոսքում արժեւորեցին քաղաքի տոնի անցկացումը որպես բոլորին միավորող, համախմբող միջոցառում: Գնդապետ Փարվանյանը գերատեսչական մեդալներ եւ պատվոգրեր, անվանական ժամացույցներ հանձնեց զինված ուժերի եւ ոստիկանության մի շարք ներկայացուցիչների, ինչպես նաեւ հրապարակվեց կորպուսի հրամանատարի շնորհավորական ուղերձը՝ Գորիս քաղաքի 145-ամյակի առթիվ:

Հանդիսավոր արարողությունից հետո հյուրերը ծանոթացան Գորիսի Գեւորգ Պարոնյանի անվան գեղարվեստի դպրոցի սաների գեղանկարչական եւ խեցեգործական աշխատանքներին: Կրթօջախի տնօրեն Սիլվա Ասատրյանը տեղեկացրեց, որ դպրոցում 60-ից ավելի սան է սովորում, նրանց մեծ մասը նկարակալի առջեւ նստած ջրաներկով ճերմակ թղթին էր հանձնում տպավորությունները՝ կապված օրվա խորհրդի հետ: Տնօրենը նաեւ փոխանցեց, որ Սիսիանի պատկերասրահում ցուցադրված են դպրոցի սաներից 15-ի աշխատանքները:

Գորիսն ու Ակսել Բակունցը մի անքակտելի միասնություն են: Տոնակատարության մասնակիցներն այցելում են մեծ արձակագրի տուն-թանգարան: Հյուրերի թվում են եղիշե Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի տնօրեն, բանասիրական գիտություններիթեկնածու Կարո Վարդանյանը, «Գրքի եւ հրատարակչական գործի կենտրոն» ՊՈԱԿ-ի հրատարակչական բաժնի պետ, գրականագետ Արմեն Ավանեսյանը: Անկեղծ զրույց է ծավալվում Բակունցի, Չարենցի կյանքի ու գործի, գրական այլ հարցերի շուրջ: Տուն-թանգարանի բակը հաճելի ձեւավորված է, աչք է շոյում փարթամ բուսականությունը, իսկ մի վանդակի մեջ շրջում են Բակունցի նկարագրած միրհավները:

Գորիսյան կոլորիտն արտացոլվեց Գորիս գյուղում, որտեղ որպես բեմ ծառայում էին քարանձավներն ու դրանց հարակից տարածքը: Գորիսի Վաղարշ Վաղարշյանի անվան պետթատրոնի դերասանները ներկայացրեցին թատերականացված դրվագներ Բակունցի «Կյորես» վիպակից, որոնք արտացոլում են Հին Կյորեսի եւ Նոր Գորիսի միջեւ սկզբնավորված հակամարտությունը, նաեւ նոր հաստատվող բարքերը, որոնք երբեմն հասցնում են ողբերգության: Ծմակի Խաչին տարին բոլոր անտառներից տուն չէր գալիս, տարին երկու շալակ մորթի էր բերում առեւտրական Միրումովներին հանձնելու, որ ազատվեր տարիներ առաջ նրանցից վերցրած տասնմեկ մանեթ պարտքից: Հաջորդ շալակ մորթին բերելուց հետո տեղեկանում է, որ պարտքից դեռ մնում է քառասունչորս մանեթ: **«Ասում են Ծմակի Խաչին գոռացել է, ինչպես թե վրան կրակ թափեին: Եվ փախել է առանց հետ նայելու»:** Գիշերը Խաչին քարափից ցած է նետվել՝ գոռալով. **«Քանդվես դու, Գորիս»:**

Հին Գորիսում թթենիների տակ Մինա բիբին ընդունեց հյուրերին եւ իր դողացող ձեռքերով մատաղ բաժանեց:

– Ուզում եմ բոլորին շնորհավորել եւ ցանկանում եմ, որ իրենց ավանդույթներին տեր լինեն, Գորիսը շատ ավանդապաշտ քաղաք է, ավանդույթներով հարուստ, բոլորի օջախներին արեւշատություն եմ մաղթում, - ասաց Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, **- Գորիսի հինգհազարամյա պատմությունը վերջին հարյուր տարում Բակունցը բերեց, խառնեց իրար՝ Հին Կյորեսն ու Գորիս քաղաքը ներկայացրեց, մարդկանց՝ իրենց մտածելակերպով, խառնվածքով, կենցաղով: 1890 թվականին պատմաբան Լեոն փոստի կառքով Գորիս է գալիս առաջին անգամ: Նոր Գորիսն ընդամենը 20 տարվա պատմություն ուներ որպես քաղաք: Լեոյին շատ է զարմացնում քաղաքի տեսքը՝ երկհարկանի տներ՝ պատերը սպիտակ ներկած, տնամեջը՝ սեղան-աթոռներով, սփռոցները վրան: Նրան զարմացնում է նաեւ, որ Գորիսում կար դպրոց, որում սովորում էր 140 աշակերտ, իսկ Լեոն հենց բնակավայր մտնում էր, հետաքրքրվում էր՝ դպրոց կա՞, թե՞ ոչ: Եթե չէր լինում, խստագույնս կշտամբում էր բնակավայրի ղեկավարներին: Դա է եղել Գորիսը եւ այն, ինչ հիմա տեսնում եք:**

Գորիս քաղաքի 145-ամյակին նվիրված տոնակատարությանը մասնակցում էին Բելառուսի քույր քաղաք Նեսվիժի ներկայացուցիչները՝ մասնավոր շինարարական ընկերության տնօրեն Օլեգ Բրատկովսկին եւ Նեսվիժի շրջխորհրդի գործկոմի նախագահ Ալեքսանդր Պանչենկոն (Բելառուսում պահպանվել են խորհրդային ժամանակների կառույցները): – **Երեք օր է՝ ինչ Գորիսում ենք, իսկ ընդհանրապես Հայաստանում առաջին անգամ ենք լինում,** – ասաց Ա.Պանչենկոն, – **այստեղ ամեն ինչ մեզ դուր է գալիս՝ մարդիկ, բնությունը, քաղաքը: Այստեղ հետաքրքրական միջոցառումներ են անցկացվում: Մենք էլ միշտ սպասում ենք մեր հայ բարեկամներին:**

Օրը հագեցած էր մարզամշակութային միջոցառումներով, ցուցադրություններով, փոքրիկ բեմականացումներով, նաեւ հյուրասիրությամբ: Հյուրերի առաջին այցը Գետափնյա թաղամասն էր, որտեղ նրանց համար տոնական սեղան էր բացված՝ ծանրաբեռ աշնանային բարիքներով, համադամ խորտիկներով: Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը բարեմաղթանքի խոսքեր հղեց թաղամասի բնակչությանը, որից հետո Գորիսի N3 նախակրթարանի սաները եւ N6 հիմնական դպրոցի աշակերտները հանդես եկան գրական-երաժշտական համադրությամբ:

Մխիթար Սպարապետի հրապարակում հյուրերին դիմավորեց «Գարեգին Նժդեհը»՝ իր խրոխտ ձայնով ներկաներին հիշեցնելով պատմական ճշմարտությունը՝ Սյունիքը Հայաստանի ողնաշարն է: Ավանդական հյուրասիրություն էր կազմակերպվել Վանքի տափ, Ըղջյազի կոչվող եւ այլ թաղամասերում, իսկ Գորիսի տուրիզմի զարգացման կենտրոնն ու երկրագիտական թանգարանը կազմակերպել էին թեյախմություն: Մատուցվում էր ուրցով եւ մասուրով թեյ, սեղանը զարդարում էին մուրաբաների հարուստ տեսականին, հալվան ու թխվածքները, չորացրած մրգերը:

Տոնական էր նաեւ Գորիսի երեկոն, Գրիգոր Տաթեւացու անվան հրապարակում հանդես եկան Երեւանի պետական կրկեսի արտիստները: Օրվա ավարտին կազմակերպվեց տոնական համերգ, իսկ երեկոյան Գորիսյան երկինքը լուսավորվեց հրավառության գույներով:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ԿԱՐԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ. ««Կյանքի սպենտ» ծրագրի շրջանակներում պետությունը փրամադրում է ընդամենը մեկ ոչ դեղապատ սպենտի գումարը»

էջ 3

ծրագրով աննշան գումար է հատկացվել, եւ դիմել ենք առողջապահության նախարարին՝ գումար ավելացնելու առաջարկով:

Իսկ եթե խոսենք մեր հիվանդանոցի ստենտավորման գներից, նախեւառաջ, պիտի նշենք, որ այստեղ մայրաքաղաքային գներից ցածր է 200-260 հազար դրամով: Օրինակ՝ եթե մեկ այլ հիվանդանոցում ասում են, որ կորոնարոգրաֆիան արժե 200 հազար դրամ, ապա դրա մեջ չի մտնում բժշկի հետ կոնսուլտացիայի, անալիզների, էխոկարդիոգրամայի եւ մի շարք այլ ծառայությունների գումարը: Իսկ մեզ մոտ այդ բոլորը կորոնարոգրաֆիայի սահմանված գնի մեջ է մտնում: Մեր հիվանդանոցում մեկ ոչ դեղապատ ստենտի տեղադրումն արժե 1 մլն 200 հազար դրամ, իսկ մեկ դեղապատ ստենտի դեպքում՝ միջինը 1 մլն 900 հազար դրամ՝ ներառյալ անալիզների, հիվանդասենյակի եւ այլ ծառայությունների գումարը, իսկ այլ հիվանդանոցներում միայն ստենտի տեղադրումը կարող է այդքան արժենալ: Բացի դրանից՝ ստենտավորումից հետո հիվանդներին պարտադիր նշանակվող «Պլավիքս» դեղամիջոցը, որ Ֆրանսիայից ենք ստանում, մենք 6 ամիս անվճար ենք տրամադրում հիվանդին: Հիվանդանոցը կարող է այդ դեղը չտրամադրել եւ մոտ 300 հազար դրամով էժան գին սահմանել ստենտավորման համար: Բայց միեւնույն է, հիվանդը պիտի պարտադիր այդ դեղամիջոցն օգտագործի: Մեր տարածաշրջանից մայրաքաղաք բուժման մեկնող հիվանդը, միեւնույնն է, ավելի մեծ գումար է ծախսելու, որովհետեւ բացի հիվանդանոցային ծախսերից, նաեւ այլ ծախսեր են առաջանում, օրինակ՝ գիշերակացի, սննդի եւ այլն:

Ամսվա կտրվածքով մոտ 2-3 հիվանդ Երեւանից գալիս է մեր կենտրոնում սրտի ստենտավորման՝ պայմանավորված ե՛ւ գների մատչելիությամբ, ե՛ւ մասնագետների պրոֆեսիոնալիզմով, ե՛ւ մեր հանդեպ ունեցած վստահությամբ (հատկապես ստենտների որակի հետ կապված): ԼՂՀ-ից նույնպես գալիս էին, բայց այնտեղ եւս կենտրոն բացվեց, որտեղ արտոնություններն ավելի շատ են, կարելի է ասել, անվճար է կատարվում ստենտավորումը:

– Հաճախ կարող ենք լսել, որ հիվանդը պետպատվերով է ստենտավորվել, բայց լրացուցիչ գումար է վճարել: Ինչո՞վ է պայմանավորված այս երեւույթը:

– Անկեղծ ասած, ժողովրդի մեջ այն կարծիքն է տարածվել, որ հիվանդանոցն է որոշում պետպատվերի շրջանակները: Իրականում պետությունն է որոշում՝ հիվանդը պետպատվերի չափորոշիչներին համապատասխանում է, թե ոչ. հիվանդանոցն այստեղ դերակատարություն չունի: Մենք միայն հիվանդի տվյալները լրացնում ենք եւ ուղարկում նախարարություն, որտեղ անցկացված մի շարք քննարկումների արդյունքում հստակեցվել է, թե բժշկական որ ցուցումների եւ էլեկտրասրտագրության ինչպիսի շեղումների դեպքում է հիվանդն ընդգրկվում պետպատվերի խմբի մեջ: Երկրորդ՝ պետությունը «Կյանքի ստենտ» ծրագրով միայն մեկ ոչ դեղապատ ստենտի համար է գումար փոխանցում եւ այն էլ հիվանդանոցի հետ կես հաշվով. կորոնարոգրաֆիայի եւ ստենտավորման հետ միասին՝ մոտ 700 հազար դրամ, որ հաճախ չի բավարարում նույնիսկ հիվանդանոցի նյութածախսը փակելուն (ես չեմ խոսում բուժական անձնակազմի, հիվանդանոցի, այլ միայն գործիքների եւ նյութերի համար ծախսվող գումարի մասին): Մայրաքաղաքի հիվանդանոցները համաձայնել են պետության այս առաջարկին, որովհետեւ սովորաբար հիվանդների 80 տոկոսը մի գործողությամբ չի սահմանափակվում, ունենում է այլ խնդիրներ: Այդ հիվանդանոցներն աշխատում են հետեւյալ կերպ. պետպատվերը լրացավ, հիվանդության պատմությունը փակում են, նորից ընդունում հիվանդին՝ նոր հիմունքներով եւ համապատասխան գնացուցակով: Իսկ մեր կենտրոնում հիվանդի պատմությունը չենք փակում եւ պետպատվերի շրջանակներում բուժօգնությունը ցուցաբերելուց հետո, եթե լրացուցիչ միջամտության կարիք է լինում, նոր արդեն հիվանդը գումար է վճարում. եթե մեկ ոչ դեղապատ ստենտի դեպքում միջինը 1 մլն 200 հազար դրամ է, երկրորդի դեպքում եթե դեղապատ ստենտ է, ապա հավելյալ վճարում է 850, եթե ոչ դեղապատ՝ 400 հազար դրամ: Իրականում մենք այս քայլով լավություն ենք անում հիվանդին եւ փոխանակ գոհ լինելու՝ բողոքում են, որ լրացուցիչ գումար են վճարում:

– Կանա՞նց, թե՞ տղամարդկանց շրջանում են ավելի շատ տարածված սրտանոթային հիվանդությունները, եւ արդյո՞ք հիվանդությունը միտում ունի երիտասարդացման:

– Սրտանոթային հիվանդությունները հիմնականում հանդիպում են 40 եւ ավելի տարիքի տղամարդկանց շրջանում, իսկ 70-ից բարձր տարիքում տղամարդկանց եւ կանանց շրջանում այդ թիվը հավասարվում է: Այս հիվանդությունը միտում ունի երիտասարդացման՝ պայմանավորված տարբեր պատճառներով: Բացի դրանից՝ ախտորոշիչ հնարավորություններն են շատացել, նախկինում մարդը մահանում էր, բայց չգիտեին, թե ինչն է պատճառը:

– Ավելորդ չենք համարում եւս մեկ անգամ նշել այն պատճառները, որոնք նպաստում են այս հիվանդության զարգացմանը:

– Այս հիվանդությունը բազմապատճառային հիվանդություն է, այսինքն՝ չկա կոնկրետ մեկ պատճառ: Նախեւառաջ, հայ ազգը գենետիկորեն նախատրամադրվածություն ունի այս հիվանդության հանդեպ, երկրորդ պատճառը ոչ առողջ ապրելակերպն է՝ ծխել, խմել, անկանոն սնվել, հատկապես ճարպոտ սննդամթերքի օգտագործում, հիպոդինամիա, այսինքն՝ ֆիզիկական պասիվ վիճակ: Մենք չենք սիրում շատ քայլել. հնար լինի, մեքենան մինչեւ չորրորդ հարկ կբարձրացնենք: Այսունիքի մարզում հատկապես ամեն երեք հոգուց երկուսը հիպերտոնիկ է, որը նույնպես նպաստում է սրտանոթային հիվանդության զարգացմանը: Բավականին մեծ է նաեւ պատերազմի հետեւանքների ազդեցությունը:

– Կենտրոնն ունի՞ մասնագետների կարիք:

– Այս պահին կենտրոնում աշխատում է չորս բժիշկ եւ մեկ կլինիկական օրդինատոր Երեւանից, որ իր մասնագիտացումն այստեղ է անցնում, այսինքն՝ հինգ բժիշկ, որ լիովին բավարար է: Տեխնիկական վերազինման առումով ձեռք ենք բերել հատուկ սարքավորում՝ սթրես–էխոկարդիոգրաֆիա, որը նվազեցնում է մաքուր կորոնարոգրաֆիայի գնացողների քանակը, այսինքն՝ եթե հիվանդը գանգատ ունի՝ հասկանալու համար խնդիր կա, թե չէ, մենք ուղարկում էինք կորոնարոգրաֆիայի, որովհետեւ այլ տարբերակ չկար (դա ե՛ւ ավելի թանկ է, ե՛ւ վնասակար, քանի որ մուտք ենք գործում մարդու սրտի անոթներ): Ես չգիտեմ՝ հանրապետության սրտաբանական կենտրոններում կա՞ այդ սարքավորումը, թե՞ ոչ, բայց կարող եմ փաստել, որ դրա ձեռքբերումից հետո մոտ 60 տոկոսով նվազել է կորոնարոգրաֆիայի գնացող հիվանդների թիվը: Այս գործիքի միջոցով հետազոտումն արժե 25 հազար դրամ, որ շատ ավելի մատչելի է, եւ հիվանդների մոտավորապես 50-60 տոկոսի հետազոտումը սրանով սահմանափակվում է:

– Չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ մեր ազգը բժշկի այցելելու սովորություն չունի: Ստենտավորումից հետո ի՞նչ հաճախականությամբ հիվանդը պիտի այցելի բժշկի:

– Ինչ վերաբերում է ստենտավորումից հետո բժշկի այցելելուն, նշեմ, որ առաջին 2-3 ամիսը բոլոր հետազոտությունները, անալիզները կատարվում են անվճար: Փորձը ցույց է տալիս, որ այդ շրջանում բոլոր հիվանդները պարտադիր գալիս են, բայց դրանից հետո հիվանդների կեսը չի գալիս, թեկուզ բժշկին պիտի այցելեն տարին 2-3 անգամ: Հետազոտությունն այդ դեպքում արժե 15-20 հազար դրամ: Բայց ամենացավալին այն է, որ քիչ է չեն գալիս հետազոտման, շարունակում են ապրել անկանոն կյանքով՝ խմել, ծխել, չհետեւել բժշկի խորհուրդներին, ճնշման տատանումներին, որ նպաստում է հիվանդության կրկնմանը:

– Կարո՞ղ ենք արձանագրել այն փաստը, որ երիտասարդ սերունդն ավելի հետեւողական է եւ ժամանակին է կանխարգելում հիվանդության զարգացումը:

– Այո՛, երիտասարդներն ավելի հետեւողական են, յուրաքանչյուր գանգատի դեպքում անմիջապես դիմում են բժշկի՝ հաստատելու կամ հերքելու հիվանդությունը: Ինչպես ասում են, ավելի հեշտ է հիվանդությունը կանխարգելելը, քան բուժելը:

– Ի՞նչ մակարդակի վրա է մարզի այլ հիվանդանոցների, հատկապես ընտանեկան բժիշկների հետ համագործակցությունը:

– Կենտրոնի ֆրանսիացի հիմնադիրները հորդորում են հաճախակի կազմակերպել կոնֆերանսներ, դեպքերի քննարկումներ, հանդիպումներ մարզի սրտաբանների, թերապեւտների հետ՝ ավելի խորը հասկանալու համար այս հիվանդությունը, առաջացման պատճառները, նախանշանները, փնտրելու կանխարգելման ուղիներ, կարճ ասած, փոխհամաձայնեցված աշխատել: Մենք նաեւ այսպես ասած փորձում ենք լուսավորչական գործունեություն ծավալել թե՛ բժիշկների, թե՛ հիվանդների շրջանում, եւ կուզենայինք, որ այն իր արդյունքը տա: Նախատեսում ենք նաեւ մարզային լրատվամիջոցներով շաբաթը մեկ օր հաղորդում պատրաստել՝ մարդկանց այս հիվանդության, դրա նախանշանների, կանխարգելման եւ մի շարք այլ թեմաներով:

Մեկ անգամ, որ, ցավոք, վերջինը եղավ, ընտանեկան բժիշկների հետ մեր կենտրոնում հանդիպում կազմակերպեցինք, որին մասնակցում էր նաեւ Երեւանի բժշկական համալսարանի ռեկտորը: Բնականաբար, ավելի երիտասարդ կադրերն են շահագրգռված իրենց գիտելիքները խորացնել, իսկ ընտանեկան բժիշկները հիմնականում ավելի տարիքով են եւ ինչ-որ առումով բավարարվում են արդեն ունեցած իրենց գիտելիքներով: «Կյանքի ստենտ» ծրագրի հետեւանքով, որ պահանջում է անմիջապես հիվանդին ախտորոշել եւ վեց ժամվա ընթացքում հասցնել կենտրոն, համագործակցության առումով որոշակի տեղաշարժ նկատվում է:

– Բացի սրտի անոթների միջամտություններից՝ նախատեսվո՞ւմ է արդյոք կենտրոնում այլ անոթների վիրահատություններ կատարել:

– Մեր կենտրոնը կոչվում է սրտանոթային, որ նշանակում է՝ բացի սրտի անոթներից՝ պետք է նաեւ այլ անոթների հետ աշխատանք կատարել: Շատ հաճախ այս հիվանդությունը, որ կոչվում է աթերոսկլերոզ, ողջ օրգանիզմի անոթների վրա է տարածվում. սրտի անոթներինն առաջացնում է ինֆարկտ, ուղեղը սնուցող անոթներինը՝ ինսուլտ եւ այլն: Այլ անոթների վիրահատությունների հիմքը դնելու համար Ֆրանսիայից պիտի համապատասխան մասնագետներ գան, վերապատրաստումներ անցկացնեն, թեկուզեւ ծայրահեղ անհրաժեշտության դեպքում ստիպված կատարում ենք վիրահատական միջամտություն: Ես այս սկզբունքով եմ առաջնորդվում. մի գործ կատարելիս պիտի բարձր մակարդակով անես, դրա համար էլ միայն համապատասխան վերապատրաստումներ անցնելուց հետո այդ առումով լայնամասշտաբ գործունեություն կծավալենք: Սրտի անոթների հետ աշխատող մասնագետը կարող է ցանկացած այլ անոթների հետ աշխատել, քանի որ սրտի անոթներն ամենաբարդն են:

– Եթե կարելի է, ներկայացրեք Ձեր նշած ժամանակահատվածի համար մահացության ցուցանիշը:

– 20-21 ամսվա ընթացքում ունեցել ենք 10 մահացության դեպք, որից ոչ բոլորն է մեր կենտրոնում արձանագրվել, այսինքն՝ ստենտավորված 330 հիվանդի մոտ 3 տոկոսը (նշենք, որ նորմալը 7-8 տոկոս է): Ընդ որում՝ մահացած հիվանդների 1.5 տոկոսն է մեր հիվանդանոցում մահացել՝ ծայրահեղ ծանր վիճակով պայմանավորված, մյուս 1-1.5 տոկոսը՝ այլ, ոչ սրտաբանական հիվանդություններից՝ ստամոքսային արյունահոսություն, ուռուցք եւ այլն:

– Հաճախ են շրջանառվում խոսակցություններ ստենտների կասկածելի որակի մասին: Ձեր կենտրոնում երաշխավորվո՞ւմ է ստենտի որակը:

– Գիտեք ինչ՝ ոչ թե չինական կամ մեկ ուրիշ երկրի արտադրության ստենտը վնասակար է կամ անորակ, այլ պարզապես կան ստենտներ, որոնք ավելի թանկ են, բայց ապահովում են հիվանդի ավելի երկարատեւ կայուն վիճակ: Մեկ դեղապատ ստենտի գնի տարբերությունը մինչեւ 200 հազար դրամ կարող է հասնել: Մենք օգտագործում ենք աշխարհում հայտնի լավագույն ընկերությունների ստենտները:

– Ճիշտ է, արդեն նշեցիք Ֆրանսիացի հիմնադիրների հետ համագործակցության որոշակի առավելությունների մասին, բայց ի՞նչ կավելացնեք ասվածին:

– Տարեկան մեկ անգամ նրանք կազմակերպում են ակցիա, որի շրջանակներում ոչ միայն գների իջեցում է լինում, այլեւ կազմակերպվում է հիվանդների անվճար հետազոտություն: Օրինակ՝ ապրիլին մոտ մեկ շաբաթ ֆրանսիացի մասնագետները կոնսուլտացիա են անցկացրել մոտ 230 հիվանդի հետ, որ փաստված է քարտերով, ընդ որում՝ բոլոր հետազոտությունները՝ անվճար: Հոկտեմբերին ակցիա կլինի ոչ միայն գների իջեցման առումով, այլեւ ստենտավորման եւ զոնդավորման հետ կապված: Ֆրանսիայից պարբերաբար ուղարկում են մասնագետներ փորձի փոխանակման նպատակով: Այս տարվա դեկտեմբերին հավանաբար մեր կլինիկական օրդինատորը երկու ամսով վերապատրաստում կանցնի Ֆրանսիայում:

– Այս պահի դրությամբ որո՞նք են հիվանդանոցի հիմնախնդիրները:

– Ցավոք սրտի, դեռեւս շարունակում է անբարեկարգ մնալ հիվանդանոց տանող ճանապարհը: Հաջորդ խնդիրը ֆինանսական բնույթի է: Այս պահին հիվանդանոցը բավականին լուրջ ֆինանսական խնդիրներ ունի: Շատ հիվանդներ, որոնց ցուցաբերվել է անհրաժեշտ բուժօգնությունը, չեն վճարել եւ տարիներով պարտք են հիվանդանոցին: Ցավն էլ այն է, որ եթե նույն հիվանդը մեկներ մայրաքաղաք, անպայման վճարելու էր բոլոր ծախսերը՝ դեռ մի բան էլ ավելին: Ստիպված ենք դիմել դատարան՝ գոնե այդ տարբերակով այս հարցերը լուծելու համար: Չկա մի հիվանդ, որ սուր վիճակում մտել է հիվանդանոց, վճարունակ չի եղել եւ նրան բուժօգնություն չի ցուցաբերվել, իսկ դա մեծ նյութածախս է ենթադրում: Շատ դեպքերում, հատկապես սոցիալապես անապահով մարդկանց, որ պետական չափորոշիչների մեջ չի մտնում, անվճար ստենտավորում է կատարվում: Բոլորն ուզում են ամենաթանկ, ամենալավ ստենտները, բայց ուրիշի հաշվին:

– Սրտանոթային հիվանդություններից խուսափելու Ձեր խորհուրդը հանրությանը:

– Ձերծ մնալ ծխել-խմելուց, առողջ սնվել, ֆիզիկապես ակտիվ ապրելակերպ ունենալ: Թող բժիշկը ախտորոշի ձեր հիվանդությունը, այլ ոչ թե ծանոթ-բարեկամը կամ էլ հարեւանը: Թող ոչ մեկը չհիվանդանա, բոլոր հիվանդությունները բուժելի լինեն՝ ծայրահեղ ծանր վիճակներից խուսափելու համար:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հանրային քննարկում՝ հակասական ու ոչ արժանահավատ թվերով

Բնապահպանություն

Սեպտեմբերի 23-ին Կապանի քաղաքապետարանի դահլիճում տեղի ունեցավ Գեղանուշի պոչամբարի հյուսիսային պատնեշի ընդհանուր ստատիկ կայունության բարձրացման նախագծի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հանրային քննարկում:

Հիշեցնենք, որ նախապես հանրային քննարկման վայր էր ընտրվել «Դանդի փրիշս մեթալս Կապան» ՓԲԸ-ի տեղեկատվական կենտրոնը: «Սյունյաց երկրի» առաջարկությամբ, սակայն, քննարկման վայրը փոխվել էր՝ հաշվի առնելով, որ «Դանդի փրիշս մեթալս Կապան» ՓԲԸ-ի մերօրյա գործունեության հետ ամեն ինչ վերապահումով է ընկալվում:

Հանրային քննարկումը վարում էր Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը, ով չփորձեց դուրս գալ վարողի անմեղ դերից եւ դիրքորոշում հայտնել Կապան քաղաքի համար սկզբունքային նշանակություն ունեցող հարցի վերաբերյալ:

Քաղաքապետարանի ծրագրերի եւ արտաքին կապերի բաժնի պետ Ավետիք Համբարձումյանն էլ տեղեկացրեց, որ խնդրո առարկայի շուրջ, իրոք, հանրային քննարկման առաջին փուլը տեղի է ունեցել հունիսի 19-ին, այն էլ՝ «Դանդի փրիշս մեթալս Կապան» ՓԲԸ-ի տեղեկատվական կենտրոնում: Ավելի ուշ պարզ դարձավ նաեւ, որ հանրային քննարկում կոչված այդ միջոցառմանը մասնակցել է 11 հոգի, որից՝ 6-ը՝ կոմբինատի ներկայացուցիչ, 3-ը՝ Կապանի քաղաքապետարանի ներկայացուցիչ, 2-ը՝ էկոլոգիական փորձաքննություն իրականացնող «Էյ Թի էմ էս Սոլյուշնս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ:

Արդյունքում՝ մասնակիցները հավանություն են տվել իրենց իսկ ներկայացրած հայտին:

Եվ ահա «հավանության արժանացած» հայտի մասին սեպտեմբերի 23-ին եղավ երկու զեկուցում, որոնք առավել քան մակերեսային էին, իսկ ավելի ճիշտ՝ փաստարկման ու հիմնավորման առումով՝ ոչինչ չասող: Երկրորդ զեկուցողի խոսքը, բուռն ցանկության դեպքում անգամ, լուրջ խոսք համարել հնարավոր չէ:

Այդ բոլորով հանդերձ՝ հանրային քննարկումը նախապես գծված սխեմայով տեղի չունեցավ: Պարզվեց, որ Գեղանուշի պոչամբարի առկա իրավիճակի եւ ծրագրերի իրականացման շնորհիվ ակնկալվող արդյունքների վերաբերյալ գրեթե բոլոր թվերը (միեւնույն հարցի վերաբերյալ ներկայացված) իրար չեն համապատասխանում կամ արժանահավատ չեն: Եվ նման իրարամերժ, հակասական թվերի առկայության դեպքում հանրային քննարկումը չկասեցվեց. դա՝ ՀՀ բնապահպանության նախարարության ներկայացուցիչ Ազգանուշ Դռնոյանի առաջարկությամբ:

Արդյունքում՝ պատասխան չտրվեց գլխավոր հարցերին՝

ա) ի՞նչ խնդիրներից ելնելով է բարձրացվում եւ ամրացվում Գեղանուշի պոչամբարի հյուսիսային պատնեշը,

բ) առաջարկվող ծրագրի արդյունքում պոչամբարի տարողունակությունը չի՞ մեծանա արդյոք. չէ՞ որ 32 հա տարածք ընդգրկող պոչամբարի հյուսիսային պատնեշը կբարձրանա 40 մետրով,

գ) ի՞նչ ազդեցություն է ունենում եւ ունենալու Գեղանուշի պոչամբարը Կապանի եւ ազդակիր մյուս համայնքների բնակչության կյանքի եւ առողջության վրա,

դ) որքանո՞վ է լցված Գեղանուշի պոչամբարը եւ ինչքա՞ն դատարկ տեղ ունի պոչամբարը դեռեւս,

ե) ինչո՞ւ «Դանդի փրիշս մեթալս Կապան» ՓԲԸ-ն չի իրականացրել պոչամբարի ռեկուլտիվացիայի պահանջը՝ դեռեւս 2006-ին առաջադրված:

Հանրային քննարկման առաջին իսկ փուլից սկսած անտեսվել է՝ այս դեպքում ամենաազդակիր համայնքը՝ Գեղանուշը, որի վարչական տարածքի մեջ է մտնում պոչամբարի մի մասը: Հանրային քննարկման ո՛չ առաջին փուլում, ո՛չ երկրորդ փուլում այդ համայնքը ներկայացուցիչ չի ունեցել. բացթողման պատճառը նույնպես չպարզաբանվեց:

Ելույթ ունեցողներից մեկի նկատառումը, թե Գեղանուշում բնակվող բժիշկ Սարիկ Աթաջանյանը սեփական նախաձեռնությամբ ուսումնասիրություն է կատարել եւ արձանագրել պոչամբարի՝ գյուղի վրա ունեցած ծայրահեղ վտանգավոր ազդեցությունը, արժանացավ մեկ-երկուսի մամռոտ արձագանքին. «Սարիկ Աթաջանյանը ջարդվածքաբան է… »: Ռեպլիկի հեղինակներն այդպես էլ չկամեցան հիշել, թե ինչպիսի ահազանգող հրապարակումներ են եղել ու կան մամուլում Գեղանուշ գյուղի վրա պոչամբարի կործանարար ազդեցության մասին:

Լուրջ, հիմնավոր ու փաստարկված պատասխանի չարժանացավ Գեղանուշի ճակատագրով մտահոգվածի մյուս հարցը՝ արդյո՞ք Կապանի կոմբինատը չի մտածում Գեղանուշ գյուղի տեղափոխման մասին:

Ի դեպ, հանրային քննարկմանը մասնակցելու եկած գրեթե բոլոր անձինք, որքանով հասկացանք, ազնիվ եւ անկեղծ մտադրություն ունեին: Սակայն կոմբինատի վարիչ Հրաչ Ջաբրայանը՝ հավատարիմ իր տեսակին, անհարկի զգուշացում արեց՝ այս դահլիճում կան մարդիկ, ովքեր կարող են եւ հուզական մթնոլորտ ստեղծել ու չհարգել քննարկման ընթացակարգը, այդ դեպքում մենք կդադարեցնենք հանրային քննարկումը: Հետո (ընթացքում) անտեղի փորձ արեց ընդհատել միանգամայն ողջամիտ հարցեր հնչեցնող Արթուր Ղազարյանին, ով էլ կոչ արեց տնօրենին՝ չիջնել փողոցի մակարդակին եւ չխոչընդոտել քննարկման իրավական ընթացքը:

Ամենատարօրինակը, այդ բոլորով հանդերձ, ՀՀ բնապահպանության նախարարության ներկայացուցիչ տիկին Ազգուշի դիրքորոշումն էր: Գրեթե բոլոր դեպքերում համամիտ էր հնչող տեսակետներին (ե՛ւ դրական, ե՛ւ բացասական), բայց եւ կոչ արեց քննարկումը շարունակել, թեեւ ներկայացված թվերից ոչ մեկը (ինչպես նշեցինք) մյուսին չէր բռնում, թեեւ հայտատուն բարձրացված հարցերից եւ ոչ մեկին փաստարկված ու ողջամիտ պատասխան չէր տալիս: Ավելի ուշ էլ կոչ արեց հայտը չվերադարձնել լրամշակման, թեեւ դրա կարիքն իսկապես կար:

Եվ քանի որ հանրային քննարկմանը մասնակցում էր ընդամենը մեկ մասնագետ՝ Արթուր Գրիգորյանը, ապա կարելի է ասել, ներկայացված հայտը խորը եւ պատշաճ մասնագիտական վերլուծության չենթարկվեց:

Ինչեւէ, Գեղանուշի պոչամբարի շուրջ հանրային քննարկման երկրորդ փուլը եւս ավարտվեց: ՀՀ բնապահպանության նախարարության ներկայացուցիչը հավաստեց, որ բարձրացված բոլոր հարցերին ժամանակի ընթացքում կտրվեն անսուտ պատասխաններ՝ մասնագետների ու փորձագետների կարծիքով համեմված: Մինչ այդ, հույս ունենք, Կապանի քաղաքապետարանն ու Գեղանուշի գյուղապետարանը եւս կարտահայտեն իրենց պաշտոնական դիրքորոշումը Գեղանուշի պոչամբարի շուրջ տեղի ունեցող զարգացումների վերաբերյալ:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ.
«Թվերի հստակեցումից հետո միայն հնարավոր է համապատասխան եզրակացություններ անել»

Սեպտեմբերի 23-ին Կապանի քաղաքապետարանում տեղի ունեցավ հանրային քննարկում՝ Գեղանուշի պոչամբարի հյուսիսային պատնեշի ընդհանուր ստատիկ կայունության բարձրացման աշխատանքային նախագծի վերաբերյալ:

Քննարկումը վարեց Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը: «Դանդի փրիշս մեթալս Կապան» ՓԲԸ-ի վարչական ղեկավար Վահե Վարդանյանը ներկայացրեց ծրագրի տեխնիկական մասը, իսկ «Էյ թի էմ էս Սոլյուշնս» ՍՊԸ-ի տնօրեն Արտակ Տեր-Թորոսյանը՝ նախագծի բնապահպանական մասը: Ելույթները լսելուց հետո քննարկման մասնակիցները, ովքեր, մեր կարծիքով, պիտի ավելի շատ լինեին, բարձրացրին հուզող հարցեր, որոնց փորձեցին պատասխանել ընկերության եւ բնապահպանության նախարարության ներկայացուցիչները: Հնչեցրած հարցերը, որոնք բավականին հիմնավոր էին, վերաբերում էին հանրային քննարկման անցկացման ընթացակարգին, պոչամբարի ծավալներին, կառուցվելիք պատնեշի չափերին, արտահանվող հանքաքարի ծավալներին, ազդակիր համայնքներին, բնապահպանական խնդիրներին, ինչպես նաեւ առաջին փուլում անցկացված հանրային քննարկման արդյունքներին:

Մասնակիցների հնչեցրած հարցերը բավականին մտահոգիչ էին եւ հիմք են տալիս մտածելու, որ հեռանկարային զարգացումները բոլորովին այլ ուղղությամբ են տանելու այս քննարկումները:

Հանրային քննարկումն ավարտելուց հետո հարցազրույց վարեցինք էկոլոգիական իրավունքի մասնագետ Արթուր Գրիգորյանի հետ, ով գնահատեց քննարկման ընթացքը, նշեց այն բացթողումներն ու թերությունները, որոնք կան ներկայացված փաստաթղթում:

– Ինչպե՞ս եք գնահատում հանրային քննարկման երկրորդ փուլը:

– Իմ կարծիքով շատ արդյունավետ անցավ հանրային քննարկման այս փուլը, որովհետեւ մենք քննարկեցինք այն բացերը, որոնք կան հայտում, ֆիքսեցինք նաեւ օրենսդրական ընթացակարգային որոշ թերություններ, որոնք թույլ չեն տալիս այս փուլում ստանալու հարցերի համոզիչ պատասխաններ: Մենք ստիպված պետք է սպասենք մինչեւ հիմնական փուլ, որը ճիշտ չէ, արդյունավետ չէ, եւ մենք իրավական ընթացակարգ ենք տալու այս հարցին, այսինքն՝ այն հանգամանքը, որ փորձագետների տված նախնական եզրակացությանը, որը չի հրապարակվում, մենք մինչ քննարկման գալը չենք ծանոթանում, իրավական խնդիր է, որը միգուցեեւ փորձենք լուծել դատական ճանապարհով՝ հասնելով ընդհուպ մինչեւ կառավարության որոշման փոփոխություն: Միգուցե այլ տարբերակի էլ դիմենք՝ թեկուզ դիմելով կառավարությանը, որպեսզի այս հարցում փոփոխություն մտցնի:

– Հատկապես ի՞նչ բնույթի սխալ հաշվարկների, թերությունների կամ հակասությունների մասին դուք բարձրաձայնեցիք քննարկման ընթացքում:

– Հիմնական խնդիրն այն է, որ մենք չունենք որեւէ հստակ թիվ պոչամբարի ծավալների, պատվարի բարձրության, լցվածության վերաբերյալ: Թվերը, որոնք իրենք են ներկայացրել, շատ խառն են եւ անարժանահավատ: Սրանք են հիմնական թերությունները, որոնց վերաբերյալ ես բարձրաձայնեցի՝ ներկայացնելով նաեւ իմ առաջարկները:

– Արժանահավատ թվեր չլինելու պարագայում կարո՞ղ ենք կանխատեսումներ անել դեպքերի զարգացման հետագա ընթացքի հետ կապված: Ճի՞շտ է արդյոք այդ բացի վրա կառուցել քննարկումը:

– Այսպես թե այնպես այդ թվերը հակասական են, եւ այսպես թե այնպես քննարկումը պետք է տեղի ունենար, այսինքն՝ ոչ թե բացի վրա է կառուցվել քննարկումը, այլ այն տեղի է ունեցել թվերի տարբերությունը հասկանալու, դրանք հստակեցնելու համար: Եթե այնտեղ կան ինչ-որ դիտավորություններ, այսինքն՝ դիտավորյալ են խեղաթյուրել դրանք՝ ինչ-ինչ պատճառներից ելնելով, դա երկար չի կարող տեւել: Այդ թվերը պիտի որոշակիացնեն, որոնցից արդեն բխեցվելու են համապատասխան եզրակացություններ թե՛ պոչամբարի՝ որպես տեխնիկական կառույցի կայունության, թե՛ դրա լցվածության, թե՛ հանքաքարի շահագործման ծավալների վերաբերյալ, որովհետեւ թիվը որ ներկայացված է, թե իբր 2006 թվականից հետո 2.1մլն խոր.մ պոչեր է լցվել, եւ իրենց ներկայացրած մյուս թվերը պոչամբարի ծավալների վերաբերյալ, խիստ անհամարժեք են իրար, այսինքն՝ կա՛մ ավելի է լցվել, կա՛մ պոչամբարի ծավալն այլ է եղել: Կրկնում եմ՝ թվերի հստակեցումից հետո միայն հնարավոր է համապատասխան եզրակացություններ անել:

– Որքանով հասկացանք, ըստ ընկերության ներկայացրած թվերի, նախատեսվում է մինչեւ 40-42 մետրով պատնեշի բարձրացում, իսկ պոչային տնտեսության տարածքը 32 հա է: Դուք ճիշտ նկատեցիք, որ այս բարձրության եւ այս ծավալի դեպքում, բնականաբար, տարողունա-

Ռոբերտ Ֆալլեթտայի եւ նրա տիկնոջ դեմ Հրաչ Զաբրայանի գործողությունները՝ դատական քննության առարկա

Ինչպես հայտնել ենք օրեր առաջ, 2011թ. հունվարի 25-26-ին Կապանի լեռնահանքային ձեռնարկության՝ «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲԸ-ի (ներկայումս՝ «Դանդի փրիշս մեթալս Կապան» ՓԲԸ) տնօրեն Ռոբերտ Ֆալլեթտային եւ նրա տիկնոջը՝ Ֆարիդա Ֆալլեթտային (կինը եւս այդ ընկերության աշխատակից էր), կամայականորեն զրկել են ազատությունից, կապի միջոցներից օգտվելու հնարավորությունից եւ, ըստ էության, վտարել Հայաստանի Հանրապետությունից:

Ռոբերտ Ֆալլեթտայի եւ նրա տիկնոջ բացատրություններից (դրանք վկայակոչվել են մամուլի բազմաթիվ հրապարակումներում) երեւում է, որ նրանց ազատությունից զրկել են լեռնահանքային այդ ձեռնարկության ներկայիս տնօրեն Հրաչ Զաբրայանը եւ Կանադայի մեկ այլ քաղաքացի Ռիք Հաուզը: Օպերացիային մասնակցել է նաեւ (ըստ նույն աղբյուրների) Հրաչ Զաբրայանի եղբայրը, ով հետագայում ղեկավարել է ընկերության մատակարարման ծառայությունը:

Տեղի ունեցածի վերաբերյալ հարուցված քրեական գործը ժամանակին կարճվել է: Այնուհետեւ Ռոբերտ Ֆալլեթտան, իր ներկայացուցչի միջոցով, բողոքարկել է քննիչի որոշումը՝ քրեական գործը կարճելու մասին: Եվ այդ բողոքի դատական քննությունը 2014 թվականի սեպտեմբերից մինչեւ հիմա շարունակվում է:

Ս.թ. սեպտեմբերի 24-ին տեղի է ունեցել Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի հերթական նիստը՝ վերոնշյալ գործի քննության նպատակով՝ նախագահությամբ Արմեն Բեկթաշյանի: Դատական քննությունը, սակայն, կրկին հետաձգվել է, պատճառը պատասխանող կողմից գործում եւս մեկ փաստաբան ընդգրկելն է, ով գործում առկա նյութերին ծանոթանալու համար ժամանակ է խնդրել:

Հայցվոր կողմը, մինչդեռ, տարօրինակ է համարում քննության այս փուլում Հրաչ Զաբրայանին դատական գործում ընդգրկելը, քանի որ բողոքարկվում է քննիչի որոշումը քրեական գործը կարճելու վերաբերյալ:

Դատական հաջորդ նիստը տեղի կունենա 2015թ. հոկտեմբերի 2-ին:

Տեւական ժամանակ դատական քաշքշուկի մեջ հայտնված այդ գործը շարունակում է մնալ հանրության ուշադրության կենտրոնում:

Մարդիկ պարզապես ուզում են իմանալ՝ իրո՞ք Հրաչ Զաբրայանը, Ռիք Հաուզը եւ Հրաչ Զաբրայանի եղբայրը հայաստանյան ձեռնարկություններից մեկի ղեկավարին զրկել են ազատությունից եւ ստիպել նրան՝ հեռանալու Հայաստանի Հանրապետությունից՝ շրջանցելով մեր երկրի օրենքները, դրսեւորելով բացարձակ կամայականություն, վիրավորելով Հայաստան պետության արժանապատվությունը:

Եթե այդպես է, ապա ինչո՞ւ նշված անձինք առայսօր պատասխանատվության չեն ենթարկվել:

Եթե այդպես չէ, ապա ինչո՞ւ չորս տարի շարունակ չի տրվում պարզագույն հարցի պատասխանը՝ ինչպե՞ս է Ռոբերտ Ֆալլեթտան պաշտոնանկ արվել ընկերության տնօրենի պաշտոնից եւ վտարվել Հայաստանի Հանրապետությունից, ինչպե՞ս է նրա աթոռը զբաղեցրել այդ «հեղաշրջման» մասնակից Հրաչ Զաբրայանը:

Ամենազարմանալին այն է, որ դատավարության ընթացքի մասին տեղեկատվությունը չի զետեղվել «DataLex» տեղեկատվական համակարգում, ինչի վերաբերյալ «Այունյաց երկիր»-ը ահազանգել է ՀՀ արդարադատության նորանշանակ նախարար Արփինե Հովհաննիսյանին:

Նախարարության պատասխանի եւ այդ գործի հրապարակայնությունն ապահովող հետագա քայլերի մասին՝ մեր հաջորդ հրապարակումներից մեկում:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Չիթապտուղ նաեւ Մեղրիում է աճում

Հայտնի է ձիթենու ավելի քան 60 տեսակ, բայց մշակության մեջ օգտագործվում է եվրոպական ձիթենին: Մշտադալար, մերձարեւադարձային այդ ծառն աճեցվում է եվրոպական մի շարք երկրներում, ինչպես նաեւ Վրաստանում եւ Ադրբեջանում: Պտուղը մանուշակագույն է: Չիթապտուղն օգտագործվում է սննդի (թարմ եւ պահածոյացված ձեւով) եւ բժշկության մեջ: Չեթը կիրառվում է օծանելիքի եւ տեքստիլ արդյունաբերության, իսկ բնափայտը (ամուր է, ունի լավ փայլ) ատաղձագործության մեջ: Չիթենին բազմացվում է կտրոններով, պատվաստներով եւ սերմերով: Ջերմասեր բույս է: Այս ամենը քաղեցինք հանրագիտարանային գրականությունից: Ջերմասեր այդ ծառատեսակը, որը որոշ տվյալներով ապրում է մինչեւ հազար տարի, կարելի է մշակել Տավուշի եւ Սյունիքի մարզերի չոր, մերձարեւադարձային կլիմայով շրջաններում:

Քանի որ մեր մարզում մերձարեւադարձային կլիմա ունի Մեղրու

տարածաշրջանը, հետաքրքրվեցինք, թե արդյոք ձիթենու մշակությամբ զբաղվողներ կա՞ն: Մեզ տեղեկացրին, որ ձիթենու այգի ունեն լեհվազցիներ Կարեն եւ Կարո Կարապետյանները:

Կարոյին հանդիպեցինք Ալվանք գյուղի վարչական տարածքում գտնվող իր եւ եղբորը պատկանող այգում, որ մոտ յոթ հեկտար տարածություն է զբաղեցնում: Պատմում է, որ նախկինում այդտեղ խաղողի անմշակ այգիներ են եղել, շատ ջանք է պահանջվել, մինչեւ հարմարեցրել են ձիթենիներ տնկելու համար: Պարզապես հողակտորը, որ ընտրել էին զեյթունի այգի հիմնելու համար, ավազահող էր, ինչը նպաստավոր եղավ արեւադարձային համարվող այդ պտղի արտադրությամբ զբաղվելու: 2002-ին եղբայրը Հունաստանից ձիթենու 7500 տնկի է բերել, եւ հիմք են դրել ձիթապտղի արտադրությանը: Տնկիներից բաժին են հանել նաեւ ընկեր-բարեկամներին, հարեւաններին, բայց, ինչպես երեւում է, Մեղրիում ձիթապտուղն այնքան էլ

էջ 8

կությունն էլ է բարձրանալու:

– Ես դրա մասնագետը չեմ, բայց առաջին իսկ հայացքից պարզ է, որ կանդրադառնա:

– Փաստորեն այդ մասին քննարկման ընթացքում ոչինչ չասվեց, բայց ստացվում է, որ մենք գործ ունենք պոչամբարի տարողունակության բարձրացման հեռանկարի հետ:

– Քանի որ դա ներկայացվեց որպես դեռեւս 2006թ. հաստատված նախագծի թվաբանություն, մենք չենք կարող պնդել, որ այս նախագիծը նպատակ է հետապնդում ծավալի մեծացման: Բայց այստեղ այլ հարց է առաջանում. պետք է խորապես ուսումնասիրել դեռեւս 2006թ. նախագիծը՝ հասկանալու համար, թե այդ նախագծում ներկայացված թվերը որքանով են համապատասխանում իրականությանը, ռացիոնա՞լ են արդյոք դրանք: Եթե իրենց նիշից եւս 42մ բարձրանա, չի ստացվում, որ 11.3 մլն խոր. մետր պոչեր է լցվելու: Ըստ իս, այստեղ խնդիր կա նախեւառաջ հասկանալու պոչամբարի նախագիծը՝ որպես այդպիսին, դեռեւս 2006թ. տվյալներով: Պոչամբարի՝ որպես կառույցի, որ այս պահին գոյություն ունի, ոչ միայն կայունության, այլեւ դրա ծավալների, էության հանգամանքը պետք է պարզել, որովհետեւ այս պահին եղած թվերով մենք չգիտենք նրա ծավալը, ինչքան կարող է լցվել, որքան կարող են լցնել: Օրինակ՝ եթե ընկերությունը հանկարծ որոշի նախատեսվածից ավելին լցնել, մենք հստակ թվերի բացակայության պատճառով չենք կարող ասել, որ դուք անօրինական եք գործում:

– Քննարկման ընթացքում շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա ազդեցությունների մասին գրեթե ոչինչ չասվեց: Կարելի՞ է արդյոք երկրորդ փուլում նման բացթողում անել:

– Իհարկե ո՛չ: ՇՄԱԳ-ի գործընթացը երկու փուլով է իրականացվում: Սկզբնական փուլում ուղղակիորեն ուրվագծվում են ազդեցության շրջանակները, որտեղ հաշվի են առնվում նաեւ համայնքի բնակիչների կարծիքները: Երկրորդ փուլում փորձագիտական, մասնագիտական կարծիքներով հիմնավորելով՝ ներկայացնում են եղած կարծիքների հիմնավոր կամ անհիմն լինելը: Ըստ էության առաջին փուլում չներկայացվեցին կարծիքներ կամ մոտեցումներ ընկերության անցկացրած հետազոտության վերաբերյալ, այն է՝ թե որքանով է դա ազդելու մարդու առողջության եւ ընդհանրապես շրջակա միջավայրի վրա:

– Երկրորդ փուլի ավարտից հետո փաստաթուղթ կազմվո՞ւմ է:

– Փորձագետներն ընկերությանը տեխնիկական առաջադրանք տրամադրելիս պետք է պահանջ ներկայացնեն, որպեսզի ընկերությունը շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ մանրակրկիտ ուսումնասիրություն կատարի եւ հաշվետվություն կազմի՝ հիմք ընդունելով այսօր հնչեցրած առաջարկությունները, դիտողությունները, կարծիքներն ու եզրակացությունները:

– Այսինքն՝ այսօրվա քննարկման արդյունքները, ակնկալում ենք, որ քննարկման երրորդ փուլում ակնհայտ կլինե՞ն:

– Այո՛, երրորդ փուլում, երբ ընկերությունը կազմի այդ հաշվետվությունը եւ ներկայացնի հանրությանը: Օրենքով քննարկման հաջորդ փուլի ժամկետը հստակեցված չէ, ընկերությունն ինքն է որոշում, թե որտեղ, երբ, ինչ մասնագետների դիմի: Մասնագետների հաշվարկներից եւ հետազոտություններից հետո միայն, երբ պատրաստ կլինի համապատասխան փաստաթուղթը, ընկերությունը կսկսի երրորդ փուլը: Համայնքը մշտապես գործընթացի մեջ է, որովհետեւ այնտեղ է իրականացվում քննարկումը. համայնքի պատվիրակված լիազորություններ մեջ է մտնում հիմնական փուլերի քննարկման կազմակերպումը, բայց երրորդ փուլի հիմնական պատասխանատուն ընկերությունն է, քանի որ փաստաթուղթն ինքն է ներկայացնում:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԽՈՍՔ ՀԻԵՏԱՏԱԿԻ

Գագիկ Ավետիսյան

Երկրային կյանքին անժամանակ հրաժեշտ տվեց Գագիկ Սուրենի Ավետիսյանը:

Սեպտեմբերի 26-ին Բեխ թաղամասի բնակչությունը, նրան ճանաչողներն ափսոսանքով հրաժեշտ տվեցին մարդամոտ, պատվարժան այդ մարդուն: Ծնվել է Բեխ գյուղում 1938 թվականին, արմատներով Մելիք-Փարսադանյան տոհմից է: Միջնակարգ կրթություն ստանալուց հետո նախ ավարտել է Երեւանի տնտեսագիտական տեխնիկումը, այնուհետեւ ընդունվել է Երեւանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի «Ֆինանսներ եւ վարկ» բաժինը, ուսման ընթացքում՝ 1961-1964 թվականներին, ծառայել է խորհրդային բանակում: Բուհն ավարտելուց հետո աշխատել է Ղափանի բուժմիավորումում՝ գլխավոր հաշվապահ, այնուհետեւ Զանգեզուրի էլցանցում՝ պլանային-տնտեսագիտական բաժնի պետ: Էներգահամակարգի էկոնոմիկայի մեջ առաջարկել է կարեւոր նորույթ, որի ներդրումից ստացվել է տնտեսական բարձր արդյունավետություն: Նորույթը տպագրվել է ԽՍՀՄ եւ ՀԽՍՀ մի շարք ամսագրերում, մտցվել կենտրոնական ճյուղային գիտահետազոտական ինստիտուտի փորձաքննության մեջ եւ կիրառվել ԽՍՀՄ էներգետիկայի ձեռնարկություններում: Չբավարարվելով ձեռք բերվածով՝ մասնագիտական ունակությունները զարգացրել է Մոսկվայի, Կիեւի, Ալմա-Աթայի որակավորման բարձրացման ինստիտուտներում:

1984 թվականից ստանձնել է Ղափանի շրջխորհրդի գործկոմի ֆինբաժնի վարիչի պաշտոնը: Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո ղեկավարել է Կապանի տարածքային հարկային տեսչությունը: ՀՀ հարկային ծառայության երրորդ դասի ավագ խորհրդական էր: Թոշակի անցնելուց հետո շարունակել է աշխատել հարկային տեսչությունում՝ բաժնի վարիչ:

Գագիկ Ավետիսյանը մի քանի անգամ եղել է Կապանի շրջխորհրդի դեպուտատ, գործկոմի անդամ: Նա ճանաչված ֆինանսիստ-տնտեսագետ էր, վայելում էր գործընկերների եւ կապանցիների հարգանքը: Մարդկային փոխհարաբերություններում՝ անմիջական ու շփվող, շրջապատի հանդեպ՝ ուշադիր, պարկեշտ անձնավորություն: Այդպիսին էլ կմնա ճանաչողների հիշողություններում:

Մի խումբ ընկերներ

Ձիթապտուղ նաեւ Մեղրիում է աճում

էջ 7 տարածված չէ:

Բայց ինչպես ասում են՝ ուրբաթը շաբաթից շուտ եկավ, 2003-ին ցրտահարությունն իր սեւ գործը արեց, տնկիները մեծապես տուժեցին, 2013-ին եւս ուժեղ ցրտահարություն եղավ, այս անգամ էլ սպասվող բերքը տուժեց (ձիթենին բերք է տալիս ծառը տնկելուց յոթ-ութ տարի հետո): Մեր զրուցակցի փոխանցմամբ, եթե այս մի ցրտահարությունը չլիներ, 25-30 տոննա բերք կստանային, քանզի մի ծառի վրա մինչեւ 30կգ բերք կարող է լինել: Մի քանի տարի առաջ տեղացած կարկուտը հերթական անգամ ամբողջ բերքը փչացրեց: Բայց Կարապետյան եղբայրները հուսահատվողներից չէին: 2002-ին տնկել, 2009-ին հավաքել են առաջին բերքը, այժմ երկու տոննա բերք են հավաքում: *«Ամեն օր դրսից զանգում են՝ ե՞րբ ես զեյթունը քաղում, մեզ չմոռանաս, ասում եմ՝ այսինչ օրերի ընթացքում»,* – ասում է, նաեւ ավելացնում՝ մի հոգին օրական վաքսուն-յոթանասուն կգ պտուղ կարող է հավաքել: Եթե ուշացնում ես, պտուղը լխկում է, եղածից պիտի յուղ քամես:

Երբ շրջում էինք այգում, աչքի էին զարնում ցրտահարությունից շարքից դուրս եկած ծառերի սեւացած բները, որոնց տակից արդեն կանաչ ընձյուղներ են բարձրանում, գոնե լավ է, որ ցրտահարությունից ձիթենու արմատներն անվնաս են մնում: Ցրտահարությունից ծառերն ու բույսերը կարելի է որոշ չափով պաշտպանել ծխահարությամբ, հնարավո՞ր չէր այդ միջոցով փրկել «զգայուն» ծառերը: *«Ողջ գյուղը պիտի ծխահարի, ծուխը պիտի այս ծորը բռնի, որ արդյունք տա, կոմբինատից «Բելազի» ոչ պիտանի անվադողեր եմ բերել, ցրտահարության ժամանակ վառում եմ, բայց արդյունք չի տալիս, նախանցյալ տարի գիշերը մինչեւ -25 աստիճան ցրտություն է եղել, դրա դեմ ոչինչ չես կարող անել,* – մանրամասնում է մեր զրուցակիցը:

Բայց նաեւ քիչ չեն ծառերը, որոնց ճյուղերին ձիթենու կանաչասեւավուն պտուղներն են: Սեւավուն պտուղներից մեկի համն ուզում ենք իմանալ, բայց պարզվում է, որ դրա համն ավելի քան դառն է եւ ուտել չի լինում: Կարոն բացատրում է, որ ձիթապտուղն առանց համապատասխան մշակման հնարավոր չէ ճաշակել: Բերքն արդեն հասունացել է, բայց համատարած բերքահավաք հոկտեմբեր ամսին է լինում: Հում վիճակում ձիթապտուղը դյուրին չէ իրացնելը, բայց քանի որ բերքն այն ծավալը չունի, միտք չունեն արտադրամասը գործարկել: Արտադրական մակերեսը կա, սարքավորումները կան, բայց քանի բերքը քիչ է, դեռ վաղ է խոսել «պատրաստի» արտադրանքի մասին:

Բնականաբար, ինչպես ամեն մի գյուղմթերքի եւ պտղի դեպքում, հետաքրքրում է ձիթապտղի իրացման խնդիրը: Տեղեկանում ենք, որ այն ուղարկում են Երեւան, որտեղ նախ մշակում, ապա իրացնում են: *«Քեսաբցի է տանողը, ասում է՝ այսպիսի համեղ զեյթուն դժվար է հանդիպել, չգիտեմ, թե այս թոնիրն է անում (նկատի ունի, որ այգին ցածրադիր տեղ է՝ բլուրներով շրջապատված. ծանոթ խմբ.), թե Մեղրու ջուրն է քաղցրահամ»,* – ասում է Կարոն, եւ դժվար չէ կռահել, որ ձիթապտղի իրացման խնդիր առանձնապես չկա: Բացի այդ՝ Մեղրիում աճեցված ձիթապտուղը ներկայացվել է մայրաքաղաքում կազմակերպված ցուցահանդես-վաճառքում, եւ բարձր է եղել գնահատականը:

Զրույցի ընթացքում սահուն անցում ենք կատարում դեպի բույսերի եւ ծառերի պաշտպանության ոլորտը: Ի՞նչ վնասատուներ են նեղը գցում ձիթենուն: *«Սպիտակ որդեր կան, որոնց դեմ դժվար է պայքարել: Մի քանի տեսակ դեղամիջոց են ասել, բայց ոչ մեկը չի օգնում: Առաջին անգամ օգոստոսի տասի կողմերը սրսկում ենք, որ թիթեռը չձվադրի, եթե դա չի օգնում, միակ միջոցն այն է, որ հողը փորում ենք, որդերը դուրս են գալիս հողի վրա, դրանք կաչաղակները կտցահարում, ոչնչացնում են,* – ասում է այգեգործը, – *մկները եւս գլխացավանք են պատճառում, հողի մեջ անցքեր են բացում, ոռոգելու ժամանակ ջուրը չի հասնում ծառին, հոսում, մի այլ տեղով է դուրս գալիս»:*

Հասանելի՞ են գյուղվարկերը ֆերմերին: Այս խնդրում Կարոն դժգոհ չէր: Մայիսին երեք միլիոն գյուղվարկ է վերցրել, որով տրակտոր է գնել, նաեւ ընթացիկ հարցեր է լուծել: Զրամատակարարումը եւս բավարարում է, ձիթենու այգին տասը օրը մեկ ոռոգում է: Ձիթենին ջրասեր ծառատեսակ չէ, խոնավ կլիմա ունեցող վայրերում այն առանց ջրելու էլ յոլա է գնում: Աշխատուժն իր եւ եղբոր ընտանիքի անդամներն են, նաեւ հավելում է, որ իրեն շատ մարդ է օգնում: Բացի ձիթենուց, այգում ծիրանենի եւ նռնենի է աճում: Կարապետյանները Լեհվազում են ապրում, ամեն օր 20 կմ ճանապարհ են կտրում այգի հասնելու եւ վերադառնալու համար, բայց եթե տարին հաջող է, բերքն՝ առատ, հոգնությունը երկրորդ պլան է մղվում, եթե չասենք, այն չեն զգում: Վերջում հավելում է, որ մեղրեցի այգեգործի պրոբլեմը շուկան է, բերքի իրացումը:

Ձիթենու այս այգիով շատերն են հետաքրքրվում, հյուրեր են եղել արտերկրից: Կարապետյանները հաճույքով ընդունում են բոլորին, հյուրասիրում, պատմում այգու ստեղծման պատմությունը, բոլորին սիրով ճանապարհ դնում:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ Սյունիքի մարզի «Պողոս Տեր-Դավթյանի անվան Վերին Խոտանանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի պատմության ուսուցչի թափուր տեղի համար: Ուսուցչի վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման, համապատասխան դրույքաչափով:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր (հանրակրթական ծրագրերին համապատասխան) եւ հարցազրույց (մանկավարժական, մասնագիտական գործնական հմտություններ): Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին նա հավակնում է (ձեւ 1).

Բարձրագույն կրթության մանկավարժության որակավորման աստիճանը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) կամ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական կամ ուսուցչական գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժը հաստատող քաղվածք աշխատանքային գրքույկից.

- Անձնագրի պատճենը.
- Ինքնակենսագրություն (ձեւ 4).
- Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում).
- Մեկ լուսանկար 3x4 չափի.
- Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք.
- ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ հոկտեմբերի 30-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9.00-15.00, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 2-ին՝ ժամը 14.00-ին Վերին Խոտանանի միջն. դպրոցում: Հասցեն՝ Սյունիքի մարզ, գյուղ Վերին Խոտանան, 5-րդ փողոց, շենք 25:

Տեղեկությունների համար զանգահարել (0285) 6-05-43, (093) 41-73-95:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Տանձավերի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հասարակագիտության (2 ժամ), համաշխարհային պատմության (1.25 ժամ), հայոց պատմության (4.75 ժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձեւ 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ձեւ 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ հոկտեմբերի 30-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 2-ին՝ ժամը 12.00-ին, Սյունիքի մարզի Տանձավերի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ ք. Կապան, գ. Տանձավեր:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 093 18 27 28 հեռախոսահամարով:

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ (0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ»
բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500 000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1700, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 01.10.2015թ.: